
ԵՐԱԶԸ ԵՒ ԵՐԱԶՈՒՆ



ԵՐԱՅԻ ԵՒ ԵՐԱՅՈՒՄ

ՎԱՀԷ ՍՎԱԾԵԱՆ



ԹՈՐՈՆԹՕ
ՄԻԴ
2024

Ստանալու Համար դիմել՝

Հեղինակին

Vahe Sivacian
sivacian@sympatico.ca

**Ազատ զգացեք ձեր շրջանակին ղրկել, բազմացնել,
տպել ու բաժնել ձրիաբար:**

**Գրութիւնը որեւէ փոփոխութեան ենթարկել կամ՝
տպագրուած օրինակները ծախել
բացարձակապէս արգիւրուած է:**

Տպագրուած - Printed



THE RELIABLE PRINTER
PRINT ASSURED

15 – 2200 Markham Rd. Scarborough ON M1B2W4
Tel : 416-292-9394

STORE HOURS

MONDAY • FRIDAY: 9^{AM} – 5^{PM}



ՀՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Իմ խորին եւ սրտաբուխ շնորհակալութիւնները, ինչպէս
նաեւ երախտագիտութեան զգացումները
կը յայտնեմ այս աշխատանքի պատրաստութեան
ընթացքին իրենց խորհուրդներով, ուղղումներով
եւ թելադրութիւններով գործս դիւրացնող
կարգ մը բարեկամներու:

Աղօթարար եմ, որ Աստուած իրենց պարգեւէ
աւուղջութիւն եւ արեւշատութիւն:

*

Շնորհակալութիւն կը յայտնեմ նաեւ բոլոր անոնց,
որոնք գիրքիս մէջ գործածուած լուսանկարները
հայթայթած են:

Աղօթարար եմ, որ Աստուծոյ օրհնութիւնները
անոնց վրայէն անպակաս ըլլայ:



ՀԵՂԻՆԱԿԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Լոյս 'ի Լուսոյ (Ա)	2013
Լոյս 'ի Լուսոյ «Բ» - Զարթօնք	2015
Լոյս 'ի Լուսոյ «Գ» -	
Տիեզերական Օրէնքները	2017
Խոկում	2017
Աւետարանի խորհուրդները - Հատոր Ա.	
Յիսուսի կեանքէն դրուագներ	2018
Աւետարանի խորհուրդները - Հատոր Բ.	
Յիսուսի առականները	2018
Աւետարանի խորհուրդները - Հատոր Գ.	
Յիսուս Քրիստոսի խօսքերը	2020
Աւետարանի խորհուրդները - Հատոր Դ.	
Յովհաննոս և Թովմասի Աւետարանները	2020
Խորհրդածութիւններ	2019
«ԵՄ ԵՄ» - Ճանչնալ Աստուած	2022
Առաւօտ Լուսոյ	2023
Մահական Երանութիւնը	2023
Կատարելութեան Ուղին եւ Ի՞նչ է Չարը	2024
Երազը եւ Երազողը	2024

ՈՏԱՆԱԲՈՐՆԵՐՈՒ ՀԱԻԱՔԱԾՈՅ

Կենցաղալոյս	2014
Կենցաղալոյս (Ա, Բ, Գ)	2019

Հեղինակին բոլոր հրատարակութիւնները մատչելի են համացանցային դրութեամբ:
 Զանոնք ներբերման հասցէ.
<http://www.luysiluso.ca>
 Հեղինակին ե-փոստի հասցէն.
sivaciyan@sympatico.ca

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

*Աստուածաշունչէն գրաբար, աշխարհաբար,
Նստել եկեղեցական ժամերգութիւններէ
մէջբերումները առնուած են
Հետեւեալ աղբիւրներէ.*

ՄԱՏՈՒՎԾԱՇՈՒՆԸ ՄԱՏԵԱՆ ՀԻՆ ԵՒՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՄԱՅ

ԸՍՏ

**ՃՇԿԻՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԱՄՆԵԱՅ ՄԵՐՈՅ Դ ՀԵՎԵԱԿԱՆ
ՀԱՄԱՏԱՐՄԱՐՈՅՆ ԲԱԳՐԷ Դ ՀԱՅԿԱՄԱ ԲԱՐԲԱՌ
1805 Դ ՎԵՆԵՏԻԿ ՈՒՄԾԴ
Դ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՄԵՐՈՅՆ ՂԱՋԱՐՈՒ**



ՀԱՄԱՅԱՆՅԱՅԻՆ ՄԱՏՈՒՎԾԱՇՈՒՆԸ ՀԻՆ ԵՒՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԱՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ



ԱՂՕԹԱՄԱՏԵԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

**ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՅՈՂՈՒԹԻՒՆ-Բ
ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ-Բ**

ՇԱՐԱԿԱՆ-Բ

ԱՂՕԹ-Բ

ՏԱՂ-Բ

ՏՊԱՐԱՆ Յ. Գ. ՓԱԼԱԿԱՇԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

1929



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- ԷՂ
 3- Շնորհակալություն
 4- Հեղինակին Հրատարակությունները
 5- Ծանոթություն
 6- Բովանդակություն
 7- Կենսագրական
 8- Ծնողացս
 9- Ձօն Այտային
 11- - Յառաջաբան
 13- Ա - Ի՞նչ է երազը
 23- Բ - Ի՞նչպես վերը Անպես Ա՛վարը
 35- Գ - Մարդը եւ Իր Արթուն Կեանքը
 41- Դ - «Ես եմ ճշմարտությունը»
 67- - Վերջաբան
 79- Ե - Յաւելուածական
 81- - Վագրը եւ Էջը
 83- - Մուրացկան Թագաւորը
 86- - Էջը Հորին Մէջ
 88- - Թափած Սուրճը
 89- - Ջուրի Ասօթը
 91- - Շուտա Հայրապետը




ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Հեղինակը ծնած է Կ. Պոլսոյ արուարձաններէն Գատրգիւղի մէջ: Նախակրթարանի ուսումը ստացած է տեղւոյն Արամեան-Ունճեան Ազգ. Վարժարանէն, իսկ միջնակարգի ուսումը՝ Սէն Ժօզէֆ ֆրանսական վարժարանէն: Ընտանեօք գաղթած են Թորոնթօ-Գանատա, ուր աւարտած է իր երկրորդական ուսումը: **1968**ին վկայուած է որպէս պսակաւոր գիտութեանց՝ Թորոնթոյի Համալսարանէն: Ապա հետեւած է բժշկական ճիւղին ու մասնագիտացած ներքին Հիւանդութեանց ու սրտաբանական մարզերու մէջ: Պաշտօնավարած է Թորոնթոյի Սէն Ժօզէֆ եւ Սէն Մայքըլ Հիւանդանոցներէն ներս: Ստացած է օգնական ուսուցչապետի տիտղոս իր շրջանաւարտ եղած Համալսարանէն: Դասախօսած է թէ՛ տեղական եւ թէ՛ միջազգային բեմերու վրայ: Յօդուածներ հրատարակած է՝ արդիւնք իր Հետազոտութիւններուն եւ **2007**ին ալ դասադիրք մը՝ սիրտը քննելու նոր Հասկացողութեամբ եւ ֆիզիքական նշաններուն բնախօսական եւ ախտաբնախօսական պատճառներու բացատրութեամբ:

Դպրութեան սկսած է Գատրգիւղի Ս. Թադաւոր Եկեղեցւոյ մէջ, եօթ տարեկանին, ապա, իր ծառայութիւնը շարունակած է Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ: Ուրար կրելու իրաւունք ստացած է Սիօն Արքեպիսկոպոսէն **1960**-ներու վերջերը: Սարկաւազ ձեռնադրուած է Սէնդ Գաղերինսի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, ձեռամբ Արիս Եպս. Շիրվանեանի: Եկեղեցւոյ ծառայութիւնը շարունակած է Ս. Խաչ եւ յետոյ, դարձեալ, Ս. Երրորդութիւն Եկեղեցիներուն մէջ: Մաս կազմած է Թորոնթոյի Ս. Խաչ Ազգ. Ամենօրեայ Վարժարանի Հաստատման եւ անոր Հոգաբարձութեան, որոշ շրջան մըն ալ ատենապետելով այդ կազմին: Իր Հետաքրքիր եւ քննախնդիր բնութիւնը զինք մղած է Հետազոտութեան՝ ոչ միայն բժշկական, այլ նաեւ կրօնական գեանի վրայ:





1911-1985



1904-1994



**ՄԻՐԵԼԻ ԾՆՈՂԱՅՍ
ԺԻՐԱՅԻ և ԻՍԿՈՒՀԻ
ՍՎԱՃԵԱՆՆԵՐՈՒ
ԱՆԹԱՌԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ
ՍԷՐ և ՅԱՐԳԱՆՔ**



«Դուք աղջիկ եղաք, ուրիշ Ձեր շահագները իբր ապրույտ նետեր
դուրս արձակուիե՛ձան:

Աղջիկները աշուխի ձապուի իր թիրախը և Տեսնէ և աղջիկը
շօրախոր Կերպուի և Պուէ, ուրիշսի իր նետը արեւ և շեռուի
երթալ:

Աղջիկները Ձեռքն՝ Ձեր Պուիուի ուրախութեամբ եղալ
Որքան որ Ան սլաշուր նետը և սիրէ, նոյնքան ալ Հաստեւ աղջիկը:»

(յարասուած - Խալիլ Ճիպրան-ի «Մարգարէն» գրքէն)



1955-2010



**Սոյն աշխատութիւնը կը շօնեմ
վարձատրուի Կողմնորոշման՝
ԱՅՏԱ ՍՎԱՃԵԱՆ-ի
անթառնա ՅԻՇԱՏԱԿԻ:**





(Պարկե-րին մէջ Գրո-թեան Բարգմանո-թիւնը)
**«Ապագան ստեղծելու համար, երազէն աւելի լա-
 բան չկայ» (Վիքթոր Հյուգօ)**

Դման մեջքերուս խօսքերը կը գերազանցեն թէ՛
 ժամանակի և թէ՛ ալ զանազան լեզուներու
 կ'իմաստաւորեն կեանքը սկսունդէ սկսունդ:

Անոնք խոր ծրարարութիւններու կայծ
 արարարարութիւններ ևն և. կայտը ևն մեզ
 առաջնորդող լուսը ըլլալ մեր կեանքի ընթացքին:

Եթէ կը մգարիս արարածարկութեան,
 իմաստութեան, կամ ներշնչումի, աչս զօրաւոր
 խօսքերը կը լուսաւորեն քու ուղիդ: Տնարեւարար,
 թող նման խօսքերը արմազանցեն քու սրտիդ մեջ
 երբ դուն կ'ստորիս աչս կեանքդ:

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ա

Այս գիրքին պարունակութեան մեծ մասը նոր տեղեկութիւններ չեն: Անոնք նախորդ հրատարակած գիրքերուս զանազան նիւթերուն մէջ հոս-ու-հոն «ցանուած» էին: Նկատի ունենալով Յիսուս Քրիստոսի մի քանի խօսքերը, որոնց վերացական իմաստները պիտի ներկայացունին այս գիրքին մէջ, որոշեցի այդ բոլոր տեղեկութիւնները հաւաքել՝ ամփոփել եւ քիչ մըն ալ աւելցնել ու միասնաբար ներկայացնել այս գիրքով իբրեւ մէկ նիւթ:

Իր կեանքի ընթացքին, մարդ շատ բաներ սորվելու առիթը ունի, եւ ահա աս է դպրոցական եւ համալսարանական ուսումի նպատակը: Դժբախտաբար այս ուսումը միայն արտաքին աշխարհի տուեալները՝ առարկայականը մեզի կը սորվեցնէ: Ճշմարտութիւնը այն է, թէ մարդ ոչինչ գիտէ ենթակայականին՝ իր ճշմարիտ էութեան մասին: Իր էութեան, իր անձին մասին իր ունեցած հաւատալիքներն ալ, ընդհանուր առմամբ սխալ հասկացողութեան արդիւնք են: Բայց մարդ նաեւ իր կեանքի պայմաններէն եւ իր կեանքի պատահարներէն սորվելիք շատ աւելի մեծ դասեր ունի: Անտարակոյս աս կարելի կ'ըլլայ միայն երբ ան պրպտող, ուշիմ եւ ընդունակ ըլլայ: Ճիշդ ասոր համար ծերունիներ շատ աւելի իմաստուն կ'ըլլան: Անոնք, ընդհանուր առմամբ անգիտակցաբար, իրենց կեանքի փորձառութիւններէն որոշ դասեր առած եւ իւրացուցած են: Աւելի լաւ պիտի չ'ըլլա՞ր, եթէ մարդ իր երիտասարդութեան հետաքրքրուէր ենթակայականին հետ եւ գիտակցաբար սորվէր իր կեանքի պատահարներէն եւ փորձառութիւններէն: Նոյնիսկ այս օրուայ բժշկութիւնը, որ կը նկատենք շատ յառաջացած

գիտութիւն մը ըլլալ, միայն մարդուն մարմինը եւ ուղեղը, որ մարմնին մաս կը կազմէ, նկատողութեան կ'առնէ: Անտարակոյս բժիշկներ շատ մը պատճառներ գտած են շատ մը հիւանդութիւններու մասին: Այդ պատճառները կրնան ըլլալ՝ անձին իր ծնողքէն ստացած ծիներու (genes) հետեւանք, որոշ մանրէներու հետեւանք, ախտազերծութեան (immunity) պակաս եւ անտարակոյս նաեւ ապրելակերպ: Իսկ ի՞նչ պէտք է ըսել անոնց համար, որ հիւանդ կը ծնին: Հաւանաբար, կարելի է իրենց մայրը մեղադրել: Բայց ինչո՞ւ ոմանք կը հիւանդանան իսկ ուրիշներ՝ ոչ: Բայց ինչո՞ւ ոմանց հիւանդութիւնը ուժգին կ'ըլլայ իսկ ուրիշները նոյն հիւանդութիւնը շատ թեթեւ կ'անցնեն: Վստահ եմ, թէ՛ բժիշկներ եւ թէ՛ ալ շատ անհատներ այս հարցումներուն պատասխաններ կարող են տալ այս օրուայ գիտութեան տուեալներուն համաձայն: Այսօրուայ բժշկութիւնը կը ջանայ «աւրուածը» շտկել, քան թէ արգելք ըլլայ «աւրուելուն»: Ինչպէս նորածին մանուկ մը իր աշխարհիկ կեանքին սկիզբն է, նմանապէս այսօր, բժշկութիւնն ալ տակաւին իր մանկութեան շրջանին մէջն է: Արդեօք Յիսուս դեղ տո՞ւաւ, վիրաբուժական գործողութիւններ կատարե՞ց երբ կը բուժէր: Տակաւին սորվելիք շատ «դասեր» ունինք:



Բ

Գլուխ Ե – «Յաւելուածական» բաժնի մէջ տեղադրուած գրութիւնները իմս չեն, համացանցէն առնուած ոմանք հայերէնի թարգմանուած գրութիւններ են, անոնց մէկ մասին հեղինակները յայտնի չեն:



Ա

ԻՆՉ Է ԵՐԱՅԻ



ԻՆՉ Է ԵՐԱՁՈՒ

Երազը առանց բացառութեան ամէն մարդու ունեցած մի փորձառութիւնն է: Ամէն մարդու «տեսած» երազը տարբեր կ'ըլլայ ուրիշներու «տեսած» երազներէն: Հետեւաբար բոլոր երազներու պարունակութիւնները կը տարբերին իրարմէ: Այս գրութեան բուն նպատակը երազներու պարունակութիւնները չէ: Անտարակոյս ի պատշաճի երբեմն կարելի է որոշ ակնարկութիւններ ընել պարունակութիւններուն մասին: Արդեօք տեւէ մէկը խորհած է, թէ ի՞նչ են երազի մը յատկութիւնները: Այս գրութեան մէջ նկատողութեան պիտի առնուին հետեւեալ յատկութիւնները:

ա- Ի՞նչ է երազը եւ ի՞նչու միայն քունի ընթացքին:

բ- Երազը իրողութիւն՝ ճշմարտութիւն մըն է՞, թէ ոչ:

գ- Երազին տեսողութիւնը եւ միջոցը - ժամանակը եւ տարածութիւնը:

դ- Երազին եւ երազողին իրարու հետ ունեցած փոխյարաբերութիւնը:

ե- Ի՞նչ կամ ո՞ւր է երազին ակը:

զ- Ի՞նչ է երազին նպատակը:

ա- Ի՞նչ է երազը եւ ի՞նչու միայն քունի ընթացքին:

Ծննդոց գիրքին Աստուծոյ ստեղծագործութեան պատմութեան մէջ հետեւեալ տեղեկութիւնը գրուած է.

«Եւ արար Լադոնա՝ զմարդն՝ ի պարկեր եւր. ըստ պարկերի Լադոնոյ արար զնա. արո՛ւ եւ եգ արար զնոսա»: (Ծննդոց Լ:27)

«Աստուած իր պատկերով ստեղծեց մարդը. Աստուծոյ պատկերով ստեղծեց զայն՝ արու եւ էգ ստեղծեց զանոնք»:

Այս գրուած տեղեկութիւնը չի նշանակեր թէ մարդ ֆիզիքապէս Աստուծոյ կը նմանի կամ Աստուած մարդու կը նմանի: Այլ, ասոր իմաստը այն է, թէ մարդ ալ Աստուծոյ ունեցած որոշ յատկութիւնները ունի: Աստուած ստեղծագործ է, հետեւաբար մարդն ալ իր

կարգին ստեղծագործ է: Ուրեմն երազը մարդուն ստեղծագործութիւնն է: Երազը կամ աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել երազելը կարելի է միայն երբ մարդուն միտքը ազատ է եւ զբաղ չէ: Երբ մարդուն գիտակցութիւնը աւելի բարձր՝ արթուն մակարդակի վրայ է, մարդուն միտքը այնքան զբաղ է արտաքին աշխարհի տուեալներով, որ անկարելի է որ մարդուն միտքը ազատ ըլլայ երազելու՝ ստեղծելու: Իսկ խորունկ քունի մէջ մարդուն գիտակցութեան մակարդակը այնքան ցած է, որ ինք ոչ տեղեակ է աշխարհէ եւ ոչ ալ՝ ինք իրմէ: Մարդուն միտքը ամբողջովին սրբուած՝ մաքրուած է: Միտք մը, որ ոչինչէ տեղեակ է, չի կրնար որեւէ խորհուրդ կամ զգացում ունենալ հետեւաբար նաեւ չի կրնար ստեղծագործ ըլլալ: Ուրեմն, երբ անհատին գիտակցութիւնը ոչ խորունկ քունի մակարդակ է եւ ոչ ալ՝ արթուն գիտակցութեան մակարդակ, այսինքն այս երկուքին միջեւ, անհատը նկատմամբ արտաքին աշխարհի «մեռած» է, բայց տակաւին գիտակցութիւն մը ունի, որ արտաքին աշխարհի տուեալներով զբաղ չէ, հետեւաբար անձը կարող է իր ստեղծագործութիւնը՝ պատմութիւնը յօրինել: Մէկ գիշերուայ, մօտաւորապէս ութ ժամուայ քունի ընթացքին մարդու գիտակցութեան մակարդակը յաճախ կը փոփոխի ընդհանուր առմամբ խորունկ քունի եւ երազի մակարդակներու միջեւ: Նոյնիսկ երբեմն անձը կարճ ժամանակի մը համար արթուն մակարդակի ալ կը բարձրացնէ իր գիտակցութիւնը: Մէկ գիշերուայ քունի ընթացքին կարելի է մարդ հինգ կամ վեց զատ երազներ ստեղծէ: Կախեալ իր յօրինած երազին պարունակութենէն, դժբախտութիւնը կամ բարեբախտութիւնը այն է, թէ ինք նոյնիսկ չի յիշեր իր յօրինած՝ ստեղծած երազները եւ կը յիշէ միայն այն երազը որ տեղի ունեցած է անմիջապէս արթննալէ առաջ:

բ- Երազը իրողութիւն՝ ճշմարտութիւն մըն է՝, թէ ոչ:

Անտարակոյս, այս հարցումը որու հարցնենք պատասխանը պիտի ըլլայ ժխտականը: Անոնք պիտի ըսեն. «Ոչ, ան միայն պատրանքային երազ մըն է եւ ոչ ճշմարտութիւն»: Անոնց տուած պատասխանը կը թուի համոզիչ ըլլալ, որովհետեւ ամէն մարդ որ կ'երազէ երբ կ'արթննայ, երազը նաեւ երազին մէջի ամէն ինչ կ'անհետանան եւ անոնք իրենց արթուն կոչած՝ քնանալէ առաջուան կեանքը կը շարունակեն: Հետեւաբար իրենց համար արթուն կեանքը ճշմարտութիւն է, բայց՝ ոչ երազը:

Այս հարցումին պատասխանը այդքան պարզ չէ, ան շատ աւելի խրթին ու դժուար է հասկնալ կամ ըմբռնել: Որոշ հասկացողութիւն մը ունենալու համար նկատողութեան առնենք երազի մը հետեւեալ պարունակութիւնը. Իր երազին մէջ անհատը անտառի մը մէջ պտոյտի կ'երթայ, յանկարծ դիմացը վազը մը կ'ելլէ եւ զինք կը հետապնդէ: Ինք վազելով կը փախչի եւ փախուստի ճամբան ձորի մը առջեւ կը վերջանայ, ինք վար կը նայի, վարը գետ մը կը տեսնէ եւ երբ ետ կը նայի կը տեսնէ իրեն մօտեցող վազը, կ'որոշէ գետ ցատկել: Անկողինէն վար կ'իյնայ եւ կ'արթննայ: Աստուծոյ փառք կու տայ որ այդ միայն երազ մըն էր եւ կամաց կամաց կը հանգչի: Իր հագած գիշերանոցը, անկողինին սաւանները եւ բարձը բոլորն ալ իր քրտինքէն թաց էին, սրտին բաբախումը զգալի էր եւ շնչառութիւնն ալ կը հեւար: Ինք ինչո՞ւ նման բնախօսական հակազդեցութիւն մը ունեցած էր: Միթէ երազը պարզ պատրանքային սուտ պատմութիւն մը չէ՞: Շատ հաւանական է, ասոր պատասխանը պիտի ըլլայ. «Ինք կարծած էր թէ ան իսկական է եւ ճշմարտութիւն մը չըլլալը միայն արթննալէ ետք հասկցած էր»: Արդեօք կարելի է՞, որ այս հարցը

տարբեր բացատրութիւն մը եւս ունենայ: Արդեօք կարելի է^օ, որ երբ անհատին գիտակցութիւնը երազի մակարդակի վրայ էր եւ ինք ալ իր երազին մէջ, երազը բացարձակ ճշմարտութիւն մըն էր, բայց ոչ երբ իր գիտակցութեան մակարդակը «արթուն» մակարդակի փոխուեցաւ: Արդեօք կարելի է^օ, որ մարդուն համար ճշմարտութիւնը փոխուի ամէն զատ գիտակցութեան մակարդակներուն: Խորունկ քունի մէջ, իր ճշմարտութիւն կարծած աշխարհը արդեօք գոյութիւն ունի^օ: Հաւանաբար ինք պատասխանէ ըսելով «Այո», որովհետեւ երբ առաւօտուն արթննայ ինք իր երէկւայ պատմութիւնը՝ կեանքը կը շարունակէ: Արդեօք կարելի է^օ, որ յաջորդ գիշեր անձը դարձեալ երազէ եւ անգամ մը եւս իր երազին մէջ նոյն անտառին մէջ ըլլայ եւ նոյն վագրին հանդպի: Ուրեմն իբրեւ բուն հարցումին պատասխան, աւելի ճիշդ պիտի ըլլայ ըսել, թէ երբ երազին մէջ ենք երազը ճշմարտութիւն մըն է, բայց երբ արթուն ենք ան միայն պատրանքային յիշողութիւն մըն է: Ուրեմն երազին ճշմարտութիւն մը կամ պատրանք մը ըլլալը կախում ունի մեր գիտակցութեան մակարդակէն, հետեւաբար ան կրնայ թէ՛ ճշմարտութիւն մը ըլլալ եւ թէ ալ պատրանք մը:

զ- Երազին տեւողութիւնը եւ միջոցը - Ժամանակը եւ տարածութիւնը:

Շատ հաւանական է, որ ամէն մարդ իր երազին մէջ երկար տեւողութիւն ունեցող երազի մը փորձառութիւնը ունեցած ըլլայ: Ենթադրենք երազ մը, որ մի քանի շաբաթ տեւող շոգենաւային պտոյտ մը ըլլայ, կամ՝ մի քանի Ժամուան ճաշկերոյթ/հաւաքոյթ մը: Եթէ նկատողութեան առնենք երազին համապատասխանող արձանագրուած ուղեգային ելեկտրական չողացումներու յաճախականութիւնը, երազը տեւած է միայն կէս վայրկեան: Միթէ բնագիտութեան գիտուն-

ները նաեւ չեն փաստած թէ ժամանակը յարաբերական է: (Այս ուղղութեամբ Հանցնարելի է նաեւ կարդալ «Տիեզերական Օրէնքները» գիրքիս «Գիտակցութիւնը եւ ժամանակը» խորագրեալ է. գլուխը. էջեր 205-215): Հետեւաբար ըստ այս տուեալներուն ժամանակը պէտք է մարդուն մտքին մէկ «ստեղծագործութիւնը»՝ երեւակայութիւնը ըլլայ: Ուրեմն երազին տեւողութիւնը երազողին համար ժամեր կամ օրեր կամ շաբաթներ կը տեւէ երբ ան իր միտքով երազին մէջ սուզուած է, բայց անկողինին մէջ եւ քնացող երազողին համար շատ կարճ ճղճիմ ժամանակ մը տեւած է:

Եթէ անգամ մը եւս նկատողութեան առնենք վերեւ ներկայացուած օրինակները, պիտի տեսնենք թէ մի քանի շաբաթ տեւող շոգենաւային ճամբորդութեան ընթացքին անհատը մղոններով հեռու վայրեր այցելած է: Երկրորդ օրինակին մէջ, ինք տասը կամ քսան մեթր տեղ քալած է ճաշկերոյթին ընթացքին զանազան սեղաններ այցելելով: Այս հեռաւորութիւնները մաս կը կազմեն «միջոց»-ին (space): Միջոցը ունի երեք ուղղութիւններ. վեր-վար, աջ-ձախ եւ առջեւ-ետեւ, որոնք հնադարեան ժամանակներէ բնագիտութեան մէջ ներկայացուած են իբրեւ «x,y,z» ուղղութիւններով: Այս երեքին իրարու հետ ունեցած յարաբերութիւնները 90° -ներ են: Վերջին հարիւր տարուայ ընթացքին ժամանակը նաեւ նկատուած է իբրեւ չորրորդ առանցք: Բայց պէտք է նկատողութեան առնենք այն իրողութիւնը, թէ այդ բոլորը՝ մղոններով ճամբորդութիւնը կամ մեթրերով սրահին մէջ պտոյտը, բոլորն ալ առանց որեւէ միջոցի, քնացողին մտքին մէջ տեղի ունեցան: Հետեւաբար կը թուի թէ «միջոց»-ն ալ մարդու մտքին մէկ ստեղծագործութիւնը՝ երեւակայութիւնը ըլլայ: Վստահաբար շատեր պիտի ըսեն թէ պատրանքային երազին ժամանակը եւ միջոցն ալ ճշմարտութիւն չեն:

դ- Երազին եւ երազողին իրարու հետ ունեցած փոխյարաբերութիւնը:

Երազողը իր երազին մէջ ամէն ինչի մէջ թափանցած է: Երազողին գիտակցութիւնն է, որ տեղեակ է երազին մէջ պատահած ամէն ինչէն: Անտարակոյս երազողը միշտ իր երազին մէջ է եւ ամէն տեսակ փորձառութիւններ կրնայ ունենալ: Ան կրնայ երջանիկ եւ ուրախ ըլլալ կամ եթէ երազը վախազդու երազ մըն է ան նաեւ կրնայ տառապիլ: Ենթադրենք թէ երազողը իր երազին մէջ իբրեւ զինուոր պատերազմի գացած է եւ թշնամիին կողմէ իբրեւ գերի կը բռնուի եւ տեղեկութիւն ստանալու համար զինք կը չարչարեն: Նախ կը ծեծեն, յետոյ մէկ մէկ մատները կը կտրեն եւ վերջն ալ աչքերուն մէկը կը հանեն: Անտարակոյս խեղճը շատ տաժանելի ժամեր կ'ապրի եւ ի վերջոյ կը որոշեն զինք սպաննել: Ճիշդ զինք սպաննող հարուածը չեկած ինք պոռալով կ'արթննայ եւ երազն ալ վերջ կը գտնէ: Ինք կը տեսնէ թէ ոչ մատները կտրուած են ոչ ալ՝ աչքը կուրցած: Երազողը իր երազին մէջ ըլլալով եւ երազին մէջ ամէն ինչ գիտնալով եւ ամէն տեսակ փորձառութիւն ունենալով հանդերձ ինք անոնցմէ չազդուիր: Աս ըսել չէ թէ վախով չ'արթննար, բայց շուտով կը հասկնայ պատրանքային երազ մը ըլլալը եւ շուտով ալ կը հանդարտի: Երազին եւ երազողին փոխյարաբերութեան նկատմամբ մէկ կարեւոր կէտ մը եւս կայ: Ինչպէս վերեւ զրուցեցինք, երազողը երազին մէջ ըլլալով եւ երազին մէջ ամէն ինչ տեղեակ ըլլալով եւ ամէն տեսակ փորձառութիւն ունենալով հանդերձ երազողը նաեւ երազին մէջ չի տեսնուիր: Ճիշդ է թէ երբ երազողը երազին մէջ ուրիշ անձի մը հետ խօսի, այդ անձին վարմունքը այնպէս է թէ անձը երազին մէջի երազողը կը տեսնէ: Բայց երազողը այդ անձին բոլոր խորհուրդները գիտնալով հանդերձ, իր գիտակ-

ցութեան մէջ ոչ մէկ տեղեկութիւն կ'ունենայ իր ֆիզիքական ներկայութեան նկատմամբ: Երազողը իր երազին մէջ ինքզինք ամենեւին չի տեսներ այլ երազողը՝ ինք զինք կը տեսնէ միայն երբ արթննայ ու ինք զինք կը տեսնէ իբրեւ անկողինին մէջ քնացող անձը, որ հիմայ արթուն է:

Երազը մարդուն մտքին մէջ կը գոյանայ եւ կը գոյատեւէ, անձն ալ իր երազին մէջ ամենուրէք է: Հետեւաբար կարելի է ըսել թէ երազը եւ երազողը մէկ են: Իբրեւ նախաբան յաջորդ պարբերակին, երազը ծագում կ'առնէ՝ ծնունդ կ'առնէ մարդուն միտքէն: Երազին մէջի զանազան անձերը կրնան ըլլալ երազողին սիրելիներէն մին կամ ամբողջութեամբ նոր անձեր: Նոյնիսկ իր ճանչցածներուն համար չենք կրնար ըսել թէ անոնք երազին մէջ են, քանի որ անոնք իրենց անկողինին մէջ պառկած կը քնանան: Ուրեմն երազին մէջինը անոնց մի «պատկերն» է: Երազին մէջի բոլոր անձերը ծնած են երազողին միտքէն, հետեւաբար կարելի է ըսել թէ բոլորն ալ իր «զաւակներն» են:

ե- Ի՞նչ կամ ո՞ւր է երազին ախր:

Անհատը իր երազը կը ստեղծէ երբ իր գիտակցութեան մակարդակը արթուն կոչուած մակարդակէն աւելի ցած է: Այդ գիտակցութեան մակարդակին անհատը իր կապը արտաքին աշխարհէն խզած ըլլալով իր գիտակցութիւնն ալ, արտաքին աշխարհէ ձերբազատած, կը գիտակցի միայն իր ենթագիտակցութեան մէջի տեղեկութիւններուն: Այդ տեղեկութիւններուն ամբողջութիւնը կը կազմէ մարդուն բնոյթը: Մարդ ինք ազատ կամք ունենալով հանդերձ, իր ենթագիտակցութեան մէջի տեղեկութիւններուն մեծ մասը հոն «դրուած» են ուրիշներու կողմէ: Մանկութենէ սկսեալ զանազան փորձառութիւններուն, ինչպէս նաեւ ծնողքին, ուսուցիչներուն, կղերականներուն, ճայնասփիւ-

ռէն եւ հեռատեսիլէն իմացած կամ տեսած պատմութիւններուն ու տեղեկութիւններուն ինչպէս իր կարգացած գիրքերուն ազդեցութիւններուն հետեւանք այդ տեղեկութիւնները անգիտակցաբար իր ենթագիտակցութեան մէջ տեղադրուած են: Անտարակոյս, կան նաեւ շատ քիչ տեղեկութիւններ որ ինք իր ազատ կամքով գիտակցաբար հոն «դրած» է: Երբ անհատ մը աշկերտութիւն կ'ընէ կամ ինքնաշարժ գործածել կը սորվի ինք այդ տեղեկութիւնները հոն ուղեկոչել եւ իր ազատ կամքով կը դնէ: Դժբախտաբար անհատը կը կարծէ թէ իր բոլոր որոշումները ինք իր ազատ կամքով կ'առնէ: Իսկ, ճշմարտութիւնը այն է, թէ իր բոլոր որոշումները կ'ըլլան ըստ իր բնոյթին: Աս ճշմարտութիւնը գիտնականօրէն փաստուած է: Մարդ ինք իր որոշումը տալէ մէկ երկվայրկեանի երեք հարիւր հազարերորդ (300msec) ժամանակ առաջ իր ուղեղը արդէն սկսած է գործադրել իր տալիք որոշումը: Ուրեմն ի՞նչ է ազատ կամքին իմաստը: Մարդ պարտ է իր ազատ կամքով մաքրել իր ենթագիտակցութեան մէջի բոլոր անպէտ տեղեկութիւնները եւ անոնց տեղ հոն գիտակցաբար «դնել» վեհ տեղեկութիւններ, առաքինութիւններ ու իր բնոյթը փոխել: Անհատը անցեալին կրնայ ունեցած ըլլալ շատ մը ցանկութիւններ, շատ մը փափաքներ որ չեն իրականացած եւ ժամանակի ընթացքին ինք նաեւ զանոնք մոռցած ըլլայ, ինչպէս նաեւ ատելութիւններ, բարկութիւններ եւայլն, բայց անոնք ալ մաս կը կազմէն ին ենթագիտակցութեան մէջի տեղեկութիւններուն:

Վերադառնալով մեր բուն նիւթին, քունի ընթացքին մարդուն յայտնաբերած աւելի ցած գիտակցութիւնը, անտեղեակ ըլլալով արտաքին աշխարհէն ու տեղեակ միայն ենթագիտակցութեան մէջի տեղեկութիւններէն, օգտագործելով այդ տեղեկութիւնները կը

յօրինէ՝ կը ստեղծէ անձին «տեսած» երազը: Ճիշդ ասոր համար է որ երազահանները մարդոց ունեցած երազները մեկնաբանելով կարող են անոնց բնոյթները գուշակել՝ ստուգել:

Ուրեմն մարդ կ'երազէ ըստ իր բնոյթին: Հետեւաբար երազին ակն ալ իր բնոյթը՝ իր ենթագիտակցութեան մէջի տեղեկութիւններն են:

զ- Ի՞նչ է երազին նպատակը:

Վստահաբար շատեր պիտի ըսեն թէ երազը որեւէ նպատակ մը չունի, այլ ան պարզապէս «երեւակայութիւն» մը՝ պատրանքային երազ մըն է: Արդեօք կարելի է՞, որ երազը նպատակ մը ունենայ: Եթէ երազահանին երազողին բնոյթին նկատմամբ ունեցած ճշգրիտ մեկնաբանութիւնները նկատողութեան առնենք, կրնանք եզրակացնել թէ երազին նպատակը ազդարարութիւն մը կամ պարզապէս իր բնոյթին նկատմամբ տեղեկութիւն մը տալ է երազողին: Եթէ իր երազները ընդհանուր առմամբ վախազդու են կամ տառապանք կը պատճառեն, անհատը պէտք է հասկնայ թէ իր ենթագիտակցութեան մէջի տեղեկութիւնները պէտք ունին փոփոխութեան: Բայց արդեօք քանի՞ հոգի նման հասկացողութեան մը տէր կ'ըլլայ եւ կը ջանայ իր բնոյթը փոխել: Պէտք չէ ոեւէ մէկը մեղադրել քանզի անոնք երազահան չեն, որ գիտնան երազին իմաստը կամ նպատակը:

Արդեօք կարելի է՞ որ երազը ունենայ նաեւ աւելի վեհ նմատակ մը: Հնադարեան ժամանակներէ սկսեալ մարդ արարած միշտ ջանացած է իր կեանքին իմաստը ու նպատակը գտնել եւ գայն իմաստաւորել: Հին յունական փիլիսոփաներէն մինչեւ այսօրուայ փիլիսոփաները շարունակ այդ նոյն հարցը կը «ծեծեն» եւ կը թուի թէ դեռ վճռական պատասխան մը չեն գտած: Արդեօք կարելի չէ՞ երազը եւ անոր յատկութիւնները

լաւ մը հասկնալ եւ անոնք բաղդատել, կամ աւելի ճիշդ կ'ըլլար ըսել, մեր արթուն կոչած կեանքը ուսումնասիրել ըստ երազին այդ տուեալներուն՝ յատկութիւններուն: Կարելի չէ^o որ նման ուսումնասիրութիւն մը մեզի տայ աւելի ճշգրիտ եւ աւելի վեհ հասկացողութիւն մը նկատմամբ մեր կեանքին, նկատմամբ մեր կեանքի նպատակին, ինչպէս նաեւ մեր «տեղը» ստեղծագործութեան մէջ, մեր յարաբերութիւնը բնութեան հետ եւ ամենակարեւորը՝ մեր յարաբերութիւնը Աստուծոյ հետ: Վստահաբար շատեր պիտի ըսեն. «ոչ», որովհետեւ երազը պատրանքային է եւ ճշմարտութիւն չէ, բայց մեր արթուն կեանքը ճշմարտութիւն մըն է: Արդեօ՞ք:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՄՓՈՓՈՒՄ

Յաջորդական գլուխներուն մէջ, նամանաւանդ Դ. գլուխին մէջ, ստորեւ ներկայացուած երազին զանազան յատկութիւններուն ակնարկութիւններ պիտի ըլլան:

1- Երազը՝ «վարինը» լաւ մը հասկնալով կարելի է եզրակացնել «վերինը»:

2- Ամէն յայտնաբերուած գիտակցութեան մակարդակին մարդուն համար ճշմարտութիւնն ալ կը փոխուի:

3- Երազը թէ՛ ճշմարտութիւն մըն է եւ թէ՛ ալ պատրանքային: Կախում ունի յայտնաբերուած գիտակցութեան մակարդակէն:

4- Երազողը երազին մէջն է:

5- Երազը երազողին մէջն է:

6- Երազը եւ երազողը մէկ են:

7- Երազողը երազին մէջ չի տեսնուիր:

8- Երազողը երազէն ֆիզիքապէս չ'ազդուիր:

9- Երազին մէջ ժամանակը աւելի արագ կ'ընթանայ:

10- Մարդ իր ենթագիտակցութեան՝ բնոյթին մէջի տեղեկութեան «պատկերով» կը ստեղծէ երազին մէջինները:



Բ


«ԻՆՉՊԷՍ ՎԵՐԸ
ԱՅՆՊԷՍ ԱՆ ՎԱՐԸ»



«ԻՆՉՊԷՍ ՎԵՐԸ ԱՅՆՊԷՍ ԱՆ ՎԱՐԸ»

Երբ շրջանակի մը շրջագիծը իր շարաւիղին չափով վեցի բաժնենք, ի յայտ կու գան պատկեր 1-ի ներկայացուցած երկու եռանկիւնները, մէկուն գագաթը

ՊԱՏԿԵՐ1 ՊԱՏԿԵՐ2



դէպի վեր, իսկ միւսինը՝ դէպի վար: Ասոր իմաստը «ինչպէս վերը, այնպէս ալ վար»ն է, եւ ցոյց կուտայ տիեզերական ներդաշնակութիւնը: Ան նաեւ կը նշանակէ «Աստուած

մարդացաւ, որպէսզի մարդ Աստուածանայ»: Հրեաներէն առաջ վեցանկիւն աստղը հայկական նշան էր (Տես պատկեր 2), բայց ան այսօր, համայն աշխարհի կողմէ ճանչցուած է իբրեւ հրեայական Դաւիթի աստղը: Մեր նպատակին համար կարեւոր հարցը այս նշանին վերեւ յիշուած եւ ներկայացուցած իմաստը՝ «ինչպէս վերը, այնպէս ալ վարը»ն է: «Վարը» կը ներկայացնէ այն ինչ որ համայն մարդկութեան փորձառութեան մէջ է, իսկ «վերը»ն ալ՝ այն ինչ որ վերացական է, այն ինչ որ հասարակ մարդուն ամենօրեայ կեանքի ընթացքին փորձառութեան մաս չկազմողն է, այն ինչ որ հոգեկան կեանքի կը վերաբերի, այն ինչ որ Աստուծայինն է: Բայց եթէ վեցանկիւն աստղին ներկայացուցած իմաստը ճիշդ է, պէտք չէ՞, որ «վարինը» լաւ հասկնալով, նաեւ հասկնանք «վերինը», քանի որ եթէ «ինչպէս վերը այնպէս ալ վարը» ճիշդ է, ուրեմն պէտք է ճիշդ ըլլայ նաեւ «ինչպէս վարը այնպէս ալ վերը»: Հետեւեալը եթէ ուշիմ ըլլանք եւ պրպտող, ու լաւ ուսումնասիրենք այն ինչ որ մեր փորձառութեան մէջ է եւ լաւ հասկընանք անոնց իմաստները, շատ հաւանական է որ որոշ հասկացողութիւն մըն ալ ունենանք «վերացականին», հոգեկան կեանքին մասին եւս: Ընդհանուր բնութիւնը մեր ամենալաւ ուսուցիչն է, եթէ ուշադրութեամբ

սորվինք բնութեան մեզի տուած դասերը, շատ աւելի լաւ կը հասկնանք մեր կեանքին նպատակը, մեր տեղը ստեղծագործութեան մէջ եւ մեր փոխյարաբերութիւնը մեր Ստեղծիչին՝ Աստուծոյ հետ: Իսկ եթէ ունենանք նման հասկացողութիւն, արդեօք չե՞նք ապրիր պատշաճ՝ Աստուածահաճոյ կեանք մը:

Ի՞նչպէս բնութենէն դաս առնել կամ սորվիլ: Իբրեւ պարզ օրինակ մը նկատողութեան առնենք փորձառութիւն մը, որ վստահաբար բոլորս ալ ունեցած ենք, բայց արդեօք այդ փորձառութենէն դաս մը սորված ե՞նք: Հաւանաբար մեր պատանեկան տարիներուն շատ անգամ ծառէ մը պտուղ ստանալու համար քար առած ու նետած ենք որպէսզի պտուղ մը իյնայ եւ զայն ուտենք: Արդեօք նման արարք մը կարող է՞ մեզի որեւէ դաս մը տալ: Երբ մենք ծառը քարկոծած ենք, մեր ըրածը վատ արարք մը չէ՞: Պիտի ուզէի՞ք, որ որեւէ մէկը ձեզ քարկոծեր: Հաւանաբար ոչ, իսկ եթէ ըներ, պիտի բարկանայիք ու հետը պիտի կռուէիք: Բայց երբ մենք ծառը կը քարկոծէինք, ծառը մեզ չեր հալածեր, այլ մեզի պտուղ մը նուէր կու տար: Ճիշդ ասոր համար չէ՞ր, որ Յիսուս ըսաւ. «սիրէ քու թշնամիդ»: Բնութիւնը այսօր մեծ տառապանքի մէջ է, անսովոր տաքութիւն, սոսկում փոթորիկներ, զանազան բոսական եւ անասնական տեսակներու անհետացում, օդի, հողի եւ ծովերու ջուրերու ապականում եւ այլն ...: Ասոնց բոլորին պատճառը մարդկութեան եսասիրութեան եւ ազահութեան արդիւնքներն են: Մարդ այդքան տխմար է՞, որ նոյնիսկ չէ հասկցած թէ ինք ալ այդ բնութեան մաս կը կազմէ: Հետեւաբար ինչ որ ինք բնութեան կ'ընէ, ինք իրեն կ'ընէ: Ուրեմն պէտք է՞ զարմանք պատճառէ թէ այսօր աշխարհի վրայ մարդ չարչարանքներու կ'ենթարկուի:

Այս գիրքին նպատակը ուսումնասիրել եւ հասկնալ է «վարին»ը, այն ինչ որ մեր փորձառութեան մաս կը

կազմէ, աւելի լաւ հասկնալու համար Աւետարանին սորվեցուցածները եւ ըստ այնմ փոխել մեր ապրելակերպը, որպէսզի մենք ալ, ըստ Յիսուսի ըսածին, «նմանինք իրեն» եւ ըլլանք «կատարեալ ինչպէս մեր երկնաւոր Հայրը կատարեալ է», որպէսզի նաեւ հասկցած ըլլանք «Վերին»ը՝ Ճշմարտութիւնը:

Պատշաճ է նաեւ օրինակ մը տալ եւ հասկնալ թէ ինչպէս «վարինը» հասկնալով կարելի կ'ըլլայ «վերինը» նաեւ հասկնալ: Դարձեալ, որովհետեւ «վերինը» հոգեւոր կեանքի, Աստուածայինին կը պատկանի մեր օգտագործելիք օրինակը պէտք է հասարակաց ըլլայ ընդհանուր մարդկութեան: Կարելի է ըսել թէ շնչել, «հաց» ուտել, ջուր խմել, միզել ու աղիքներէ արտաքսում բոլորն ալ կեանքի հասարակաց փորձառութիւններ են ամենուն համար, ինչպէս նաեւ տեսնել, լսել, շօշափել եւայլն ...: Բայց կարելի է, որ մարդ կոյր կամ խուլ ծնած ըլլայ: Աշխարհի վրայ զանազան մշակոյթներու ուտելու, խմելու սովորութիւնները իրարմէ կը տարբերին, ճաշերուն համերը տարբեր են, ուրեմն մարդոց ունեցած փորձառութիւններն ալ իրարմէ կը տարբերին: Նոյն ժամանակ այս վերել նշուած փորձառութիւնները մարդուն իրեն չեն պատկանիր այլ իր մարմնին: Վստահաբար, այս վերջին նախադասութիւնը շատերը խռովեցնէ: Եթէ մարդ կարծէ թէ ինք իր մարմինն է, զարմանք պէտք է պատճառէ թէ ինք խռովի: Բայց նկատողութեան առնենք հետեւեալ պարզ օրինակը, որ միանգամայն մեզի նաեւ սորվեցնէ «վարին»-էն «վերին»-ը հասկնալ:

Նկատողութեան առնենք պարզ օրինակ մը, փորձառութիւն մը, որ հասարակաց է ամէն մարդու համար: Ինքնաշարժ գործածելու օրինակը մեզի նաեւ պէտք է սորվեցնէ թէ մենք ո՞վ ենք: Երբ ինքնաշարժ նստած կը ճամբորդենք մէկ վայրէ ուրիշ վայր մը,

չենք ըսեր թէ մենք ինքնաշարժն ենք եւ ինքնաշարժը մեզ կը ներկայացնէ, այլ մենք պարզապէս ինքնաշարժը օգտագործողը, զայն քշողն ենք: Անտարակոյս կան որոշ անձեր, որոնք կը հպարտանան իրենց ինքնաշարժով եւ չեն կրնար բաժնուիլ անկէ: Միթէ շատեր զանոնք շփացած խենթ չեն նկատե՞ր: Իսկ երբ մեր որոշեալ վայրը հասնինք ինքնաշարժէն դուրս չե՞նք ելլեր, զայն հետին ձգել եւ մեկնիլ: Եթէ ենթադրենք թէ այս ինքնաշարժի տեղեկութիւնը կը ներկայացնէ «վարին»-ը, ուրեմն ասկէ ի՞նչ պէտք է սորվինք նաեւ «վերին»-ին նկատմամբ: Մենք մեր մարմինը չենք, այլ զայն գործածողը, օգտագործողը ճամբորդելու համար մէկ «կէտ»-էն ուրիշ «կէտ» մը: Առաջին «կէտ»-ը մարմնին ծնունդն է իսկ միւս «կէտ»-ն ալ՝ մահը, այսինքն ան մեր միջոցն է այս աշխարհիկ կեանքը ապրելու համար: Թէ՛ ինքնաշարժը եւ թէ՛ ալ մարդուն մարմինը նիւթէ յառաջ եկած են ու ժամանակի ենթակայ, հետեւաբար փոխուելու, հիննալու եւ աւրուելու ալ ենթակայ են: Մարդուն մարմնին համար զայն «ծերութիւն» կը կոչենք իսկ ինքնաշարժին համար ալ՝ հնոտիք բեկոր (junk): Մարդ արարած ոգի մը ունի, որ անմահ է եւ ինք իր մարմինը գործածողն է եւ ինք իր մարմինը չէ: Անտարակոյս մարմինը իրեն կը պատկանի, ինչպէս ինքնաշարժն ալ իրեն կը պատկանի: Ինչպէս լաւ խնամուած ինքնաշարժ մը կրնայ մեզի երկար տարիներ ծառայել, նմանապէս լաւ խնամուած մարմին մը կարող է մեզ երկար տարիներ ծառայել: Երբ ինքնաշարժը գէշ գործածենք յաճախ կ'աւրուի եւ նորոգութեան եւ շինութեան կը կարօտի: Նոյնն է հարցը մարդկային մարմնին համար ալ, յաճախ կը հիւանդանայ եւ հիւանդանոց կ'երթայ «նորոգութեան»՝ առողջութեան համար:

Այս հանգրուանին, վերադառնանք մեր բուն

ներվի: Ուրեմն պէտք է գտնենք փորձառութիւն մը, որ առանց բացառութեան հասարակաց ըլլայ ամէն մարդու: Այս փորձառութիւնը պէտք է քունը ըլլայ, այսինքն գիտակցութեան (consciousness) մակարդակի փոփոխութիւն: Նախորդ գիրքերէս «Մահուան Երանութիւնը» խորագրեալ գիրքիս մէջ (էջեր 57-60), մեր փորձառութեան մաս կազմող զանազան գիտակցութեան մակարդակներու մասին տեղեկութիւն տրուած էր: Հոս միայն կարճ ամփոփում մը պիտի ներկայացուի զանազան գիտակցութեան մակարդակներու համապատասխանող արձանագրուած ուղեղային ելեկտրական շողացումներու յաճախականութիւններու մասին:

ա- Պէթա (β) ալիքները (12-32Հշ) կը նկատուին բարձր յաճախականութիւն ունեցող ալիքներ: Անոնք ներկայ են երբ անհատին գիտակցութեան մակարդակը արթուն՝ բարձր մակարդակի վրայ է:

բ- Ալֆա (α) ալիքները (8-12Հշ) կը գոյանան երբ ուղեղը հանդարտ է եւ չ'աշխատիր: Անհատը կարելի է հանգիստ նստած երաժշտութիւն մը մտիկ կ'ընէ:

«գ- Թէթա (θ) ալիքները (4-8Հշ) կը գոյանան երբ ուղեղը քունի մէջ է, ինչպէս նաեւ քնածութեան դրութեան (hypnotic state) մէջ: Այս հանգրուանին քնացող անհատը նաեւ կ'երագէ:

դ- Տէլթա (δ) ալիքներու (0.5-4Հշ) գոյութիւնը կը նշանակէ խորունկ քունը:

Յաջորդ ալիքային յաճախականութեան ներկայացուցած գիտակցութեան մակարդակի փորձառութիւնը ամէն անհատի փորձառութեան մաս չի կազմեր: Նման փորձառութիւն ունեցող անձեր հազուադիւրս կը գտնուին:

ե- Կամա (γ) ալիքները (32-100Հշ եւ աւելի ...) շատ հազուադիւրս կը գտնուին: Գիտակցութեան ա'յս մակարդակին անհատը կը հասնի իմացողութեան եւ

ընթերցումի դադարեցնակէտը՝ շնորհիւ իր յայտնաբերած անհուն գիտակցութեան: Այս «արթնութիւն»-ը արտաքին պարագաներու հետեւանք չէ այլ ներքին գրգռանիւթերու (hormones) արդիւնք: Այս հանգրուանին մարմնի մէջի գորութիւնը կը բարձրանայ մինչեւ ուղեղ եւ անհատին համար իր ներքին աշխարհն է, որ կը ներկայացնէ ճշմարտութիւնը, քան թէ արտաքին աշխարհը:

Նկատողութեան առնենք վերեւ ներկայացուած գիտակցութեան զանազան մակարդակները եւ մարդուն ունեցած փորձառութիւնները:

Առաջին՝ «ա», այսինքն արթուն մակարդակին մարդուն փորձառութիւնները գլխաւորաբար կը պատկանին իր մարմնին, իր հինգ զգայարաններէ ստացած տեղեկութիւններուն եւ անոնց յառաջ բերած մտային զգացում ու խորհուրդներուն: Նոյն արտաքին դէպք մը կրնայ տարբեր փորձառութիւն տալ տարբեր անձերու, կախեալ անոնց մշակութային տարբերութիւններէն, տարիքէն կամ անհատին ունեցած անցեալի փորձառութիւններէն: Այս հանգրուանին նման «մարմնային-մտային» փորձառութիւններէ մարդ կարող է շատ բան սորվիլ նկատմամբ պատշաճ ապրելակերպ մը ունենալու համար (օրինակ. վերեւ ներկայացուած ծառը քարկոծելը ու թշամին սիրելը):

Երկրորդ՝ «բ», գիտակցութեան մակարդակին, անհատը տակաւին արթուն է, բայց այս հանգրուանին անհատին համար իր ներքին «աշխարհը» աւելի կարեւոր է, քան թէ արտաքինը: Ինք կը սկսի անդրադառնալ իր ունեցած խորհուրդներուն: Ան կ'անտեսէ արտաքին աշխարհը: Ան կամաց-կամաց իր գիտակցութեամբ կ'իջնէ իր ենթագիտակցութեան մակարդակին, ուր կը գտնուին իր բնոյթին տուեալները: Այս հանգրուանին խորհուրդներու «ձայն»-ը կը դադրի

բայց «պատկեր»-ներ կը յայտնուին: Առանց քնանալու մարդ կարող է այս մակարդակին հասնիլ: Ասոր մէկ օրինակը ինքնաշարժ վարելն է՝ շատ ապահով կերպով, բայց անգիտակցաբար: Աս կը կոչուի անուրջք (day-dreaming): Աս գիտակցութեան մակարդակի յափշտակութիւն մըն է: Այս հանգրուանին անհատը իր զգայարաններէն որեւէ փորձառութիւն չ'ունենար: Ան չ'իմանար, չի զգար, չի համտեսեր, չի հոտոտեր նոյնիսկ չի տեսներ: Կարելի է այս բոլորը տեղի կ'ունենան, բայց իր գիտակցութեան մէջ չեն արձանագրուիր: Անհատին գիտակցութիւնը զբաղ է երեւակայութիւններով:

Չորրորդ՝ «դ», այսինքն խորուկ քունի մակարդակին, անհատը արտաքին ոչինչէ տեղեակ է, ան նաեւ իր ենթագիտակցութեան մէջի տեղեկութենէն ալ տեղեակ չէ, հետեւաբար, ոչ խորհուրդ ունի եւ ոչ ալ որեւէ զգացում: Այս հանգրուանին կարելի է ըսել թէ անհատը «Սուրբ սիրտ» ունի, այսինքն սրբուած, մաքրուած միտք մը, այն ինչ որ Յիսուս Իր լեռան քարոզին մէջ ըսած էր: Ուրեմն եթէ կը հաւատանք Յիսուս Քրիստոսի ըսածներուն՝ սորվեցուցածներուն, այս հանգրուանին անհատը իր ճշմարիտ էութեան՝ Քրիստոսի հետ հաղորդութեան մէջ է, բայց ինչ դժբախտութիւն որ ինք արթուն չէ, որ այդ փորձառութիւնը գիտակիցօրէն ունենայ:

Երրորդ՝ «գ», այսինքն քնածութեան կամ երազի գիտակցութեան մակարդակին անհատը իր կապը ամբողջովին խզած է արտաքին աշխարհի հետ, բայց նաեւ՝ ամբողջովին մխրճուած իր ենթագիտակցութեան մէջի տեղեկութիւններուն մէջ՝ իր բնոյթին մէջ: Այս հանգրուանին անհատը կ'երազէ եւ երազելու փորձառութիւնը հասարակաց է բոլոր անձերու առանց մշակութային, տարիքի սահմանաբակումներու: Երազներուն պարունակութիւնները կրնան ազդուիլ թէ

մշակույթի եւ տարիքի տարբերութիւններու հետեւանք, բայց ոչ երազելը ինքնին:

Այս գիրքին նպատակը ուսումնասիրել է երազը, որ առանց բացառութեան ամէն անհատի փորձառութեան մաս կը կազմէ եւ կը պատկանի «վարին»-ին, հասկնալ անոր ինչ ըլլալը, այդ տեղեկութիւնը բաղդատել Յիսուս Քրիստոսի ըսածներուն հետ եւ ջանալ հասկնալ նաեւ «վերին»-ը:

Հինգերորդ՝ «ե», վերեւ ներկայացուած այդ բարձր գիտակցութեան մակարդակին մասին յաջորդ գլուխներուն մէջ պատշաճ տեղեկութիւն պիտի տրուի:

Ինչպէս ինքնաշարժը կը պատկանի «վար»-ին, իսկ մարդուն մարմինը «վեր»-ին, ինքնաշարժ վարելը «վար»-ին եւ մարդուն իր մարմինը օգտագործելը «վեր»-ին, նմանապէս մարդուն աշխարհիկ կեանքը կը պատկանի «վար»-ին եւ հոգեւոր կեանքն ալ «վեր»-ին, ինչպէս իր գիշերուան քունի ընթացքին ունեցած երազը կը պատկանի «վար»-ին, կայ նաեւ «երազ» մը որ կը պատկանի «վեր»-ին:





Գ

ՄԱՐԴԸ
ԵՒ ԻՐ ԱՐԹՈՒՆ ԿԵԱՆՔԸ



ՄԱՐԴԸ ԵՒ ԻՐ ԱՐԹՈՒՆ ԿԵԱՆՔԸ

Եթէ հնադարեան «ինչպէս վերը այնպէս ալ վարը» առածը նկատողութեան առնենք եւ զայն նկատենք ճշմարտութիւն մը ըլլալ, մեզի համար կարելի կ'ըլլայ նաեւ ըսել «ինչպէս վարը այնպէս ալ վերը»: Իսկ եթէ կան ոմանք որ կը տատամսին այս առածին ճշմարտութիւն մը ըլլալը, յանձնարարելի է կարդալ նախորդ գիրքերէս «Զարթօնք» գիրքին «Կրօնքը եւ Գիտութիւնը» խորագրեալ առաջին գլուխը (էջեր 33-79): Բնութեան մէջ կան շատ մը օրինակներ որոնք կը հետեւին այս առածին սորվեցուցած ճշմարտութեան: Այս ուղղութեամբ, «Զարթօնք» գիրքէն հետեւեալ մէջբերումը պատշաճ կը թուի. «Մօտաւորապէս 30 տարի առաջ «fractals»-ի գիտութիւնը եղաւ: Ըստ այս գիտին, ամբողջութեան ամէն մի մասին մէջ կրկնուած է նաեւ ամբողջութիւնը: Բայց այդ իրողութիւնը ընդհանուր առմամբ բազմաթիւ անպէտ մասերով մեզմէ ծածկուած է»:

Մարդ կը կարծէ թէ այն ինչ որ իր անձնական փորձառութեան մէջ է, այն ինչ որ ինք իր հինգ զգայարանքներով է որ տեղեակ կ'ըլլայ ճշմարտութիւնն է: Այս հիման վրայ ան աշխարհը, աստղերը, տիեզերքը իրենց բոլոր զանազանութիւններով ճշմարտութիւն մը ըլլալ կը նկատէ: Բայց այսօր գիտունները, որ պարզ ժողովուրդէն շատ աւելի լաւ գիտեն աշխարհի եւ տիեզերքի մասին, այս ուղղութեամբ շուարած մնացած են եւ կ'ըսեն թէ աշխարհը եւ տիեզերքը պարզապէս ողջագիր (hologram) մըն է: Անոնք նաեւ կ'ըսեն թէ մէկէ աւելի տիեզերքներ (multiverse) գոյութիւն ունին: Իսկ եթէ անոնք ճշմարտութիւններ են, ինչո՞ւ անոնք, ինչպէս նաեւ «մութ մարմինը» (dark matter), մարդոց փորձառութեան մէջ չեն: Անոնք նաեւ փաստած են թէ երբ պարզապէս մարդուն ուշադրու-

թիւնը՝ գիտակցութիւնը, կեդրոնացած է ենթահիւլէական մասնիկի մը վրայ, անոր ընթացքը կը փոխուի:

Մարդ կը կարծէ թէ իր ֆիզիքական մարմինը եւ իր ապրած կեանքը նաեւ ճշմարտութիւններ են, քանի որ ինք կը զգայ, կը խօսի, կ'ուտէ ու կը խմէ եւ ամէն առաւօտ իր գիշերուան քունէն վերջ իր կեանքը նախորդ գիշեր ձգած տեղէն կը շարունակէ: Անտարակոյս մարդուն կեանքը, իր յայտնաբերած «արթուն» կոչուած գիտակցութեան մակարդակին համար ճշմարտութիւն մըն է, ինչպէս երազը նաեւ ճշմարտութիւն մըն է յայտնաբերուած «երազի» մակարդակի գիտակցութեան համեմատ: Միայն այն ատեն երբ արթուն ենք, կը հասկնանք թէ երազը ճշմարտութիւն մը չէր այլ՝ պարզապէս պատրանքային երազ մը: Արդեօք կարելի չէ^o, որ մեր արթուն կոչած կեանքն ալ «երազ» մը ըլլայ եւ անոր պատրանքային երազ մը ըլլալը կարող պիտի ըլլանք հասկնալ երբ մեր գիտակցութեան մակարդակը ներկայ «արթուն» մակարդակէն շատ աւելի բարձր մակարդակի մը հասնի: Այս աւելի բարձր գիտակցութեան մակարդակն է, որ մարդուն մէջ «զարթօնք»-ը կը ներկայացնէ: Եթէ «արթուն» գիտակցութեան մակարդակը կը պատկանի «վարին» եւ «զարթօնքի» բարձր մակարդակն ալ՝ «վերին», պէտք չէ^o, որ երկուքին իրարու հետ ունեցած յարաբերութիւնը, երազի եւ արթուն մակարդակներու իրարու հետ ունեցած յարաբերութեան նման ըլլայ: Եթէ ինչպէս «վերը այնպէս ալ վարը», կամ «ինչպէս վարը այնպէս ալ վերը» ճիշդ է, այս վերջին եզրակացութիւնը պէտք է ճիշդ ըլլայ: Միթէ երազին մէջի բոլոր անձերը եւ իրերը երազողին ստեղծագործութիւնները չէի^oն: Ուրեմն, ո՞վ է ստեղծիչը այն երազին, որ մենք մեր արթուն կեանքը կը համարենք, ո՞վ եւ ո՞ւր է մեր կեանքը երազողը: Ինչպէս առաջուց գրուած էր, երազողը տեսնել կարելի

չէ երբ տակաւին կ'երազենք: Երազողը տեսնել կարելի է միայն երբ երազէն արթննանք: Այդ արթննալն ալ մարդուն ունենալիք «զարթօնք»-ն է: Ուրեմն ո՞ւր են այս կեանքը, այս աշխարհը եւ այս տիեզերքը: Պէտք չէ՞ անոնք ըլլան երազողին մտքին մէջ: Մեր ունեցած բոլոր փորձառութիւնները երազողին ունեցած փորձառութիւններն են: Ուրեմն երազողը պէտք է ըլլայ մեր ճշմարիտ խօսիւնը: Արդեօք պիտի չուզէինք տեսնել, ճանչնալ մեր ճշմարիտ խօսիւնը՝ երազողը:

Շատ հաւանական է, որ շատ մը անձեր այս գլուխին մէջ գրուածները պարզ եւ սխալ եզրակացութիւն համարեն եւ կարեւորութիւն չիտան, որովհետեւ որեւէ փաստ կամ աւելի ճիշդ կ'ըլլար ըսել, որեւէ հեղինակութիւն ունեցող փաստ մը գոյութիւն չունի: Արդե՞օք:





ԾՈՒՂՈՒԹՅՈՒՆ ԿՐ ԺԵՌՅԱՆԷ **ՏԵԼԵԱՆԵՐ**
ԲԱՐԿՈՒԹՅՈՒՆ ԿՐ ԺԵՌՅԱՆԷ **ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ**
ՎԱԽԵ ԿՐ ԺԵՌՅԱՆԷ **ԵՐԱՋԵ**
«ԵԱ»-Ը ԿՐ ԺԵՌՅԱՆԷ **ԱՃՈՒՐ**
ՆԱԽԱՆՋԵ ԿՐ ԺԵՌՅԱՆԷ **ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ**
ՏԱՐԱԿՈՅԱՐ ԿՐ ԺԵՌՅԱՆԷ **ՎԱՏԱՀՈՒԹՅՈՒՆ**
ԿԱՐԴԱԼ ՆԱԵԻ ԱՔԷՆ ԴԷՊՈՒ ՁԱՆ





Դ

«ԵՄ ԵՄ
ՃՀՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ»



«ԵՍ ԵՄ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ»

Այս գլուխին մէջ նկատողութեան պիտի առնուին Ս. Գիրքէն մէջբերուած որոշ համարներ եւ ջանալ անոնց բուն իմաստները հասկնալ՝ գրուածները փախտատելով նախորդ գլուխներուն մէջ ներկայացուած մեր ունեցած փորձառութիւններուն հետ: Այսինքն, «վերինին» մասին տրուած տեղեկութիւնները փախտատելով մեր «վարինին» նկատմամբ ունեցած փորձառութիւններուն եւ հասկացողութեան հետ, պատշաճ կերպով հասկնալ նաեւ մեզի ներկայացուած «վերինին» մասին տրուած տեղեկութիւնները:

Այս գլուխին մէջ ներկայացուած համարներուն մեծ մասը ներկայացուած էր նաեւ «ԵՍ ԵՄ» խորագրեալ նախորդ գիրքիս մէջ եւս:

Ինչպէս առաջին գլուխին վերջաւորութեան «եզրակացութեան» մէջ գրուած էր.

«1- Երագը՝ «վարինը» լաւ մը հասկնալով կարելի է եզրակացնել «վերինը»:

Այս գլուխին մէջ պիտի ջանանք Աւետարանէն մէջբերուած համարներուն տրուած մեկնաբանութիւնները վաւերացնել բաղդատելով «վերինը» «վարինին» հետ: Անտարակոյս Քրիստոսի ըսածները կը պատկանին «վերինին» իսկ՝ հասարակաց փորձառութիւններն ալ «վարինին»: Միթէ Քրիստոս չըսա՞ւ.

«Դու՛ն է՛ն ներդո՛ւսոյ ասորի ե՛ն, եւ ես՝ ՚ի վերո՛ւսոյ անորի եմ: Դու՛ն՝ յաշխարհէ՛ ասորի ե՛ն, ես՝ շէ՛մ յայսմ աշխարհէ»: (Յովհաննու Ը:23)

«Դուք վարէն էք, ես վերէն եմ. դուք այս աշխարհէն էք, ես այս աշխարհէն չեմ»:

Անոնք որոնք «վարին» կը պատկանին պիտի ներկայացուին առաջին գլուխին վերջաւորութեան եզրակացութեան տասը տարբեր կէտերով (էջ 24):

Յաջորդ նկատողութեան առնուելիք համարը հետեւեալն է.

«...արի որ ննջեալ, է- կանգնեա՛ց ՚ի մեռելոց,
է- լո-սա-որեացե պէ-պ Քրիստոս. » (Եփեսացիս Ե:14)
« ...Արթընցիր, դուն որ կը քնանաս եւ կանգնէ
մեռելներէն ու Քրիստոս քեզի լոյս պիտի տայ:»

«2- Ամէն յայտնաբերուած գիտակցութեան
մակարդակին մարդուն համար ճշմարտու-
թիւնն ալ կը փոխուի:»

Ըստ Ս. Գիրքէն մէջբերուած այս համարին, կը
թուի թէ համայն մարդկութիւնը քունի մէջ է եւ կը
թուի «մեռած» ըլլալ նկատմամբ իր հոգեւոր կեանքին,
ինչպէս գիշերուան քունի միջոցին «մեռած» ենք ար-
թուն աշխարհին: Ազդարարութիւնը այն է թէ պէտք է
արթննանք: Այն մեր արթուն եւ ճշմարտութիւն կար-
ծած կեանքն ալ կը թուի քունի տարբեր մակարդակ մը
ըլլալ: Իսկ եթէ քունի մէջ ենք, մեր ապրած կեանքն ալ
պէտք է «երազ» մը ըլլայ: Այս երազին մէջ մենք կը
թուինք մեր գիտակցութեամբ մեռած ըլլալ ճշմարտու-
թեան: «Քրիստոս քեզի լոյս պիտի տայ»-ն ականարկ մըն
է աւելի բարձր գիտակցութեան մակարդակի: Քրիստոս
«Լոյս» բառը օգտագործած է անոր փոխաբերական
իմաստով, որ գիտակցութիւնը կը ներկայացնէ: Ինչպէս
լոյսը ամէն ինչ տեսանելի կ'ընէ, նմանապէս գիտակցու-
թիւնն ալ մեզ ամէն ինչի գիտակից կ'ընէ: Գիտակցու-
թեան ալը Քրիստոսն է: Գիտակցութիւնը մեր մէջ
Աստուծոյ ներկայութիւնն է: Միթէ չէ՞ գրուած.

«Ե՛ս էմ լո՛յս աշխարհի»: (Յովհաննէս Ը:12)

«Ե՛ս եմ աշխարհի լոյսը»:

«Ե- ասաց Լսող-աշ, Եղիցի լոյս. է- էղէ-
լոյս»: (Ծննդոց Ը:3)

«Աստուած ըսաւ. «Լոյս ըլլայ», ու լոյս եղաւ»:

«Եւ այս էն աւերիչն զոր լուսն առ ՚ի նմանէ՝ եւ պարտէ՛նի յեզ. զի Լապտաթ լո՛յս է, եւ խաւար ՚ի նմա չի՛, եւ ո՛չ մի» : (Լ. Թռռն Յովհաննոս Լ:5)
«Ասիկա է այն պատգամը որ իրմէ լսեցինք ու ձեզի կ'իմացնենք, թէ՛ Աստուած լոյս է ու անոր մէջ բնաւ խաւար չկայ»:

«...Եւ եմ լո՛յս աշխարհի. որ Գայ զէնի իմ՝ ընդ խաւար մի՛ Գնացե. այլ ընկալցի զլո՛յսն կենաց» : (Յովհաննոս Ը:12)

« ...Ես եմ աշխարհի լոյսը. ան որ իմ ետեւէս կու գայ, խաւարի մէջ պիտի չքալէ , Հապա կենաց լոյսը պիտի ունենայ»:

«Դո՛ւն էի լոյս աշխարհի. ... եւ ո՛չ լուսանէն ճրագ՝ եւ դնեն ընդ Գրոսանաւ, այլ ՚ի վերայ աշտանակի. եւ լոյս Կայ ամենեցոն» որ ՚ի Կանն իցեն : Լյնպէս լուսաւորեցե լոյս յեր առաջի մարդկան, որպէսզի Կեցեն զԳործս յեր Բարիս, եւ Կաւաւորեցեն զՀայր յեր որ յերկնս է » : (Մարգէնոս Լ:14-16)

«Դո՛ք էք աշխարհի լոյսը. ... Ու ճրագը չեն վառեր եւ դներ գրուանի տակ, Հապա աշտանակի վրայ որ լոյս տայ բոլոր տանը մէջ եղողներուն: Այնպէս թող լուսաւորուի ձեր լոյսը մարդոց առջեւ, որ տեսնեն ձեր բարի գործքերը ու փառաւորեն ձեր Հայրը որ երկինքն է»:

Ընդհանուր ստեղծագործութեան մէջ միայն մէկ գիտակցութիւն կայ, ան ալ Աստուծոյ Լոյսը՝ գիտակցութիւնն է: Ստեղծագործութեան մէջ ամէն ինչ՝ նիւթ, բոյս, անասուն ու մարդ այդ նոյն գիտակցութիւնն է որ կը յայտնաբերեն զանազան մակարդակներով: Ճիշդ ասոր համար Քրիստոս նաեւ ըսած է. «Դուք էք աշխարհի լոյսը»: Եթէ մենք աշխարհի լոյսն ենք, ըսել է թէ մեր յայտնաբերած գիտակցութիւնն ալ Քրիստոսի գիտակցութեան մէկ մասնիկն է եւ Քրիստոս ալ մեր

մէջ է: Աստուած մարդուն իր գիտակցութեան մակարդակը, իր յայտնաբերած եւ մեր արթուն կոչած ներկայ մակարդակէն, շատ աւելի բարձր մակարդակի մը բարձրացնելու կարողութիւնը տուած է եւ ահա ասոր յաջողութիւնն է Աստուածայայտնութիւնը մեր մէջ իրականացնելը:

Ամէն գիտակցութեան մակարդակի փոփոխութեան մարդուն համար ճշմարտութիւնն ալ կը փոխուի:

Իբրեւ վերելի տեղեկութեան շարունակութիւն, ուսումնասիրենք հետեւեալ մէջբերումները:

«Ե՛ւ Էմ Ճանապարհն՝ Էմ ճշմարտութիւնն Էմ

կէս՝ նի»: (Յովհաննէս Ժ:Դ:6)

«Ե՛ս եմ ճամբան՝ ճշմարտութիւնն ու կեանքը»:

«3- Երազը թէ՛ ճշմարտութիւն մըն է եւ թէ ալ պատրանքային: Կախում ունի յայտնաբերուած գիտակցութեան մակարդակէն»:

Մարդուն համար իր ճշմարտութիւնը կը փոխուի իր յայտնաբերած գիտակցութեան մակարդակին համեմատ: Երբ ինք գիշերը քունի միջոցին կ'երագէ, իրեն համար երազին մէջի պատմութիւնը ճշմարտութիւն կը թուի ըլլալ մինչեւ որ արթննայ: Երբ արթննայ այն ատեն կը հասկնայ, թէ ան միայն պատրանքային երազ մըն էր: Նմանապէս մարդ կը կարծէ թէ իր «արթուն» կոչած կեանքը ճշմարտութիւն մըն է: Բայց ըստ Քրիստոսի խօսքին, միակ ճշմարտութիւնը Քրիստոսն է: Հետեւաբար պէտք չէ^o, որ մարդ ջանք ընէ եւ իր «արթուն» կոչած այս քունէն ալ արթննայ եւ ճշմարտութիւնը գիտնայ, աւելի ճիշդ կ'ըլլայ ըսել. ճշմարտութեան փորձառութիւնը ունենայ՝ երազողը տեսնէ:

Այն «փրկութիւնը» որ Նոր Կտակարանին մէջ յաճախ կրկնուած է, Աստուծոյ ներկայութեան փորձառութիւնը ունենալն է, Աստուծոյ մէջ լուծուիլն է, մեր

«արթուն» կոչած երազէն արթննալն է: «Փրկութիւնը» մահէն վերջ «երկինք» երթալ չէ, այլ ան ներկային մէջ Աստուծոյ հետ միանալն է, ան «երազէն» արթննալն է: Միթէ ներկան յաւիտենական չէ⁶: Ճշմարտութիւնը այն է, թէ անոնք որոնք փրկութեան կը ձգտին պիտի չփրկուին, որովհետեւ անոնք կապուած իրենց «Ես»-ին եւ մարմնին կը կարծեն թէ անոնք են որ պիտի փրկուին: Իսկ Քրիստոս բացայայտ ըսած է.

«Զի որ կամեցի զանշն իւր կեցոյցանել,
կորոսցէ՛ զնա. եւ որ կորոսցէ զանշն իւր
վաան իմ՝ կեցոսցէ՛ զնա» : (Ղաււաւ Թ: 24)
«որովհետեւ ո՛վ որ ուզէ փրկել իր անձը՝ պիտի
կորսնցնէ զայն, իսկ ո՛վ որ կորսնցնէ իր անձը՝ ինծի
համար, պիտի փրկէ զայն»:

Մեր նպատակը պէտք է ըլլայ Քրիստոս մեր մէջ յայտնաբերել, քան թէ մենք զմեզ փրկել՝ փրկութիւն ցանկալ: Եթէ մեր կեանքին բուն նպատակին մէջ յաջողինք փրկութիւնը Աստուծոյ մի պարզեւն է, որուն կ'արժանանանք: Յիսուս Քրիստոս բացայայտ սորվեցունք թէ ինչպէս պէտք է յաջողինք այս մեր «արթուն» կոչած քունէն արթննալու համար, նոյնը նաեւ գրուած է Հին Կտակարանին մէջ եւս.

«Երանի այնոցիկ՝ որ սորբէ են արդիւն, զի նո՛ւա
զԼսորոսաժ րեացեն» : (Մատթէոս 13: 12)
«Երանի՛ անոնց որ սրտով մաքուր են, վասն զի անոնք
պիտի տեսնեն Աստուած»:
«Եղիջի՛ սորբի՛ զի Ես սորբէ եմ» : (Դեպարացոյ
ԺԷ: 45) «ուստի սո՛ւրբ եղէք, որովհետեւ ես սուրբ եմ»:
«Կանխեցէ՛ եւ շաներոո՛ւ զի ես եմ Լսորոսաժ» :
(Սաղմոս 137: 11)
«Հանդարտեցէ՛ք ու գիտցէ՛ք թէ ես Աստուած եմ»:

Մեր այս «քունէն» արթննալու միջոցառումը, ինչպէս այս մէջբերուած համարներուն մէջ շեշտուած

է, պարզապէս «սուրբ սիրտ»՝ խորհուրդներէ եւ զգացումներէ սրբուած, մաքրուած միտք մը կերտել է։ Աս կարելի կ'ըլլայ երբ մենք բոլոր աշխարհիկ՝ արտաքին հետապնդումները կը «կանխենք»՝ անոնցմէ մենք զմեզ կը ձերբազատենք եւ ամենէն կարեւորն ալ ձերբազատուիլն է մեր «Ես»-էն ու յարիւ է դէպի մեր ճշմարիտ էութեան՝ Քրիստոսի։ Միայն այն ատեն է, որ կը կարողանանք զԱստուած տեսնել, Աստուած ճանչնալ։

Պատշաճ է հետեւեալ երեք համարները միասին նկատողութեան առնել։

«Ես՝ ի Հայր՝ Եւ Հայր յիս է»։ (Յովհաննոս ԺԴ։10)

«Ես Հօրը մէջն եմ, ու Հայրը իմ մէջն է»։

«Ես Եւ Հայր իմ մի էնի» (Յովհաննոս Ժ։30)

«Ես ու Հայրը մէկ ենք»։

«Ես՝ ի Հօր իմոմ, Եւ դուք յիս, Եւ Ես՝ ի

Յիւ»։ (Յովհաննոս ԺԴ։20)

«Ես իմ Հօրն մէջ եմ, ու դուք՝ իմ մէջն, ես ալ՝ ձեր մէջ»։

«4- Երազողը երազին մէջն է»։

«5- Երազը երազողին մէջն է»։

«6- Երազը եւ երազողը մէկ են»։

Եթէ մեր փորձառութեան մէջ եղող «վարինը»՝ երազը եւ երազին զանազան յատկութիւնները լաւ հասկցած ենք, պէտք է լաւ հասկնանք նաեւ «վերինին» իմաստը։ Ըստ վերեւ ներկայացուած առաջին երկու համարներուն, կը թուի թէ ընդհանուր սեղծագործութիւնը Հայր Աստուծոյ «երազն» է։ Ան Հայր Աստուծոյ փառքն է։ Ան Հայր Աստուծոյ Փիզիքական արտայայտութիւնն է։ Ան Հայր Աստուծոյ Որդին Քրիստոսն է։ Հայր Աստուած Իր ստեղծագործութեան մէջ է։ Հայր Աստուած Իր Որդւոյն Քրիստոսի մէջն է։ Ստեղծագործութիւնը՝ Որդին Քրիստոս ալ Հայր Աստուծոյ մէջն է եւ երկուքը

մէկ էն: Իսկ վերեւ Աւետարանէն մէջբերուած երրորդ համարին իմաստն ալ շատ հետաքրքրական է: Ըստ այդ համարին եւ Քրիստոսի ըսածին մեր արթուն կեանքն ալ մեր ներքին Քրիստոսի երազն է: Այս հիման վրայ Քրիստոս ըսած է. «Ես ձեր մէջն եւ դուք ալ իմ մէջն»: Եթէ մեր կեանքը երազ մըն է, պէտք չէ՞ երազը երազողին մտքին մէջ ըլլայ: Նոյն ժամանակ երազողն ալ երազին մէջն է: Յիսուս Քրիստոս այս նոյն գաղափարը մեզի տարբեր բառերով ալ յայտնած էր.

«Ես եմ որք՝ եւ դուք ո՛րք որ Լասարայեալ ե
յիս՝ եւ ես ՚ի նա, նա՛ Բերէ պարտ յոյժ. պի
տանայ իմ ո՛չինչ կարէի առնել»: (Յովհաննոս
ԺԵ: 5)

«Ես որթատունկն եմ, եւ դուք ճիւղերն եք. ա՛ն որ իմ
մէջն կը մնայ, ու ես՝ անոր մէջ, անիկա՛ շատ պտուղ
պիտի բերէ, որովհետեւ առանց ինծի ոչինչ կրնաք ընել»:

Այս համարին մէջ Քրիստոս որթատունկը կ'օգտագործէ անոր փոխաբերական իմաստով: Քրիստոս ինքզինք կը ներկայացնէ իբրեւ որթատունկը եւ մեզի ալ իբրեւ որթատունկին ճիւղերը: Որթատունկը մէկ է, բայց բազմաթիւ ճիւղեր ունի: Բոլոր ճիւղերը որթատունկին մաս կը կազմեն: Որթատունկին ճիւղերուն նպատակը պտղաբեր ըլլալն է: Ի՞նչպէս «պտղաբեր» ըլլալ: Ստեղծագործութեան նպատակը Աստուածայայտնութիւնն է: Մարդուն նպատակը այդ յայտնութիւնը իրականացընելըն է: Քանի որ բոլորս ալ Քրիստոսը մեր մէջ ունինք, բոլորս ալ պէտք է Հայր Աստուծոյ Որդւոյն մաս կազմենք եւ Իր զանազան արտայայտութիւնները ըլլանք: Ժիշդ ասոր համար Ս. Գիրքին մէջ գրուած է.

«Նոյն ինչն Լոգին վկայէ Լոգոսոյ» մե-
րում, եթէ եմք որդիք. ապա եւ ժա-
ռանգք. ժառանգք՝ Լսարայեալ՝ եւ ժա-

«անհաւանդիցէ՛ Բրիստոսի» : (Հռովմայեցիս Ը:16-17)
 «Նոյսինքն Հոգին վկայութիւն կու տայ մեր Հոգիին հետ՝ թէ մենք Աստուծոյ զաւակներն ենք. եւ եթէ զաւակներ՝ ուրեմն՝ ժառանգորդներ՝ Աստուծոյ ժառանգորդներ եւ Քրիստոսի ժառանգակիցներ՝ ... »:

«Տեւե՛լ՝ որպիսի՛ սէր շնորհեաց մեզ Հայր, պի որ-
 դի՛լ Լսորոշոյ կոշեացոսէ՛ մէկ» : (Լ. Յովհաննէս Գ:1)
 «Տեսէ՛ք թէ Հայրը ինչպիսի՛ սէր շնորհեց մեզի, որպէսզի մենք Աստուծոյ զաւակներ կոչուինք. ...»:

«Պատասխանի եր նոցա Յիսուս. Ո՞չ յօրէնան
 յեր Գրեալ եւ ասացի թէ ասորոս՝ թէ իցէ՛լ» :
 (Յովհաննէս Ժ:34)

«Յիսուս պատասխանեց անոց. «Միթէ ձեր Օրէնքին մէջ գրուած չէ՞. եւ ըսի. Դուք աստուածներ էք»:

«Եւ ասացի թէ ասորոս՝ թէ իցէ՛լ, կամ որդի՛լ
 Զարչրէւոյ ամենեկեան» : (Սաղմոս 2Լ:6)

«Եւ ըսի. «Դուք աստուածներ էք. Դուք բոլորդ Ամենաբարձրին որդիներն էք»» : (Սաղմոս 2Բ:6)

«Զի Տէր Լսորոշ չե՛ր միջի խոմ է, մեծ է-
 Հարն» : (Երկրորդ Օրինաց Է:21)

«Քանի որ Տէրը՝ քու Աստուածդ, այն մեծ եւ ակեղ
 Աստուածը, ձեր մէջ է»:

Այս «վերինին» նկատմամբ ներկայացուած գաղա-
 փարը լաւ հասկնալու համար նկատողութեան առնենք
 «վարինին» պատկանող հասարակաց փորձառութիւն՝
 գիտութիւն կամ հասկացողութիւն մը: Մարդ մարմին
 մը ունի եւ այդ մարմինը միլիառաւոր բջիջներ ունի
 եւ ամէն մի բջիջ կը գործէ ի յօգուտ ընդհանուր
 մարմնին: Ամէն բջիջ մարմնին մաս կը կազմէ, բայց
 կարելի չէ ըսել թէ միայն մէկ բջիջ մը ընդհանուր
 մարմինն է: Նմանապէս ամէն ինչ եւ ամէն մարդ
 «Որթատունկին»՝ Քրիստոսի մաս կը կազմէ, բայց
 կարելի չէ ըսել թէ ինք Քրիստոսն է: Ճիշդ է թէ առանց
 Քրիստոսի ներկայութեան ինք գոյութիւն չի կրնար

ունենալ, ինչպէս առանց մեր մարմնին բջիջներն ալ գոյութիւն չեն կրնար ունենալ, ինչպէս առանց որթատունկի ճիւղերն ալ գոյութիւն չեն կրնար ունենալ: Երբ մարմնի բջիջներէն մին, ընդհանուր մարմնին օգուտին համար գործելու տեղ, որոշէ եսասէր ըլլալ եւ միայն ինքզինք յառաջացնել, մենք զայն քաղցկեղ (cancer) կը կոչենք ու կը կտրենք մարմինէն կը զատենք ու կը նետենք: Յաջորդ համարն ալ ակնարկութիւն մըն է այս գաղափարին վերաբերեալ «վերինին»:

«Եւ եմ ո՛րքն ճշմարիտ՝ եւ Հայր իմ մշակէ՛ »:

(Յովհաննէս ԺԵ:1)

«Եւ եմ ճշմարիտ որթատունկը, եւ իմ Հայր՝ մշակն է»:

Հայր Աստուած Որթատունկին «մշակ»-ն է: Աւետարանին մէջ նաեւ գրուած է թէ մշակը պտղաբեր չեղող ճիւղերը կը կտրէ ու կը նետէ: Յիսուս կարճ առակով մըն ալ այս նոյն գաղափարը եւ իր ողորմածութիւնը մեզի յայտնած է:

«Ես եւս եմ պտուղս պայս. Թշննի՛ մը էր որոմն քնկեալ յայգոջ իրոմ. եւ էկն խնդրել պրոջ ՚ի նմանէ՛ եւ ո՛չ էգիտ: Ես եւս պայգեգործն. ահա՛ էրեկ անկէ եւ՝ յորմէ Գեորգ Գամ խնդրել պրոջ ՚ի Թշննոջ՝ եւ ո՛չ գրանեմ. արդ՝ կորեա՛ պտա, ընդէ՞ր եւս վերկիրդ խափանէ: Նա՛ պապասխանի եր՝ եւսաւ. Տէ՛ր, Թո՛ղ պտա՛ ան ան էս, մինչեւ շո՛րջ պտուկս Բրեյից՝ եւս արկից աղբ. Բերեա՛ս արասցէ՛ պրոջ. ապա Թէ ո՛չ՝ յամէ՛ եւս Լապցէ՛ս պտա: (Ղուկաս ԺԳ:6-9)

«Սա՛ առակն ալ ըսաւ. «Մէկը իր այգիին մէջ ունէր տնկուած թզենի մը. եկաւ պտուղ փնտռելու անոր

վրայ՝ բայց չգտաւ: Ուստի ըստ այգեպանին. «Ահա՛ երեք տարի է՝ որ կու գամ՝ պտուղ կը փնտռեմ այդ թզենին վրայ՝ ու չեմ գտներ. ա՛լ կտրէ՛ վայն՝ ինչո՞ւ խափանէ գետինը»: Ան ալ պատասխանեց անոր. «Տէ՛ր՝ ա՛յս տարի ալ ձգէ վայն՝ մինչեւ որ բերեմ անոր շուրջը ու թրիք դնեմ: Եթէ պտուղ տայ՝ լա՛ւ. այլապէս՝ յետագայի՛ն կտրէ վայն»:

Այս առակին մէջ այգիին տէրը կը ներկայացնէ Հայր Աստուած, իսկ այգեպանն ալ Որդին Քրիստոս, իսկ թզենին ալ հասարակ մարդը: Կը թուի թէ Քրիստոս միշտ կը Զանայ մեզի առիթը տալ որպէսզի մենք ալ «պտղաբեր» ըլլանք: Հետեւաբար արդեօք չե՞նք խորհիր թէ մեր պարտականութիւնն է «պտղաբեր» ըլլալ՝ ապրիլ յօգուտ ընդհանուր ստեղծագործութեան՝ բնութեան եւ համայն մարդկութեան: Ասոր իմաստը Քրիստոս յայտնաբերել է մեր մէջ, որպէսզի մեր կեանքն ալ ԅիսուսի նման ցոլացնէ բոլոր Աստուածային յատկութիւնները: Ապա թէ ոչ մեր վախճանն ալ ցաւալի կ'ըլլայ: Միթէ չէ՞ դրուած:

«Զի Դոշակն մեղաց մահ է»: (Հովհաննէս 9:23)

«Որովհետեւ մեղքին վարձատրութիւնը մահ է»:

Այս հանգրուանին պատշաճ է որոշ տեղեկութիւն մը տալ թէ ինչ է, որ կը մեռնի: «Մահուան Երանութիւնը» գիրքիս մէջ մահուան նկատմամբ լայնածաւալ տեղեկութիւն տրուած է, հոս պարզապէս ամփոփում մը պիտի ներկայացուի: Եթէ ամէն մարդ Քրիստոսի մի արտայայտութիւնն է եւ Քրիստոս ալ անմահ է, պէտք չէ՞ որ ամէն մարդ ալ անմահ ըլլայ: Միթէ չե՞նք ըսեր. «մարդուն հոգին անմահ է»: Հոգին Քրիստոսի ներկայութիւնն է մարդուն մէջ: Ան մարդուն ճշմարիտ էութիւնն է, բայց դժբախտաբար մարդ իր ճշմարիտ էութեան փորձառութիւնը չունի, որովհետեւ մարդուն ուշադրութիւնը արտաքին աշխարհի վրայ է, իսկ իր հոգին ներքին աշխարհին կը պատկանի: Մարդ Զայն չէ տեսած, չէ շօշափած, չէ լսած..., բայց նոյն ժամանակ

առանց Անոր մարդ նաեւ կարող չէ տեսնել, չօշափել, լսել, հոտոտել կամ համտեսել՝ այն բոլորը որ իր փորձառութեան մաս կը կազմեն: Երբ մարդուն ճշմարիտ էութիւնը, որ կ'երագէ մարդուն ապրած կեանքը, խորունկ քունի մէջ մտնէ երազն ալ վերջ կը գտնէ: Մարդկային տեսանկիւնէ գայն մահ կը կոչենք: Մարմինը որ հողէն եկած էր հող կը վերադառնայ իսկ Հոգին ալ՝ իր ակին Աստուծոյ: Մարդ իր կեանքի ընթացքին ըստ իր ունեցած խորհուրդներուն, խօսքերուն ու արարքներուն տեղեկութիւն ամբարած է: Այս տեղեկութիւնը կը մնայ Հոգիին մէջ եւ մենք գայն ոգի կը կոչենք: Ուրեմն մարդուն մարմինն է, որ կը մեռնի: Մարդու որդի Յիսուսի մարմինն ալ մեռաւ բայց չփտեցաւ ու երեք օրէն զօրութեան փոխուեցաւ եւ անհետացաւ: Ամէն մարդ նաեւ ունի անհատականութիւն մը: Յիսուսի մահէն վերջ իր անհատականութիւնը յարութիւն առաւ: Միթէ Յիսուս չմեռած իր աջ կողմի միւս խաչեալին չըսա՞ւ. «Այս գիշեր դուն ինծի հետ դրախտը պիտի ըլլաս»: Իսկ երբ մեղաւոր ենք, անհատականութիւնն ալ մարմնին հետ կը մեռնի կ'երթայ:

Հետաքրքրական է թէ Յիսուս ինչու ուրիշ երկու ոճրագործներու հետ խաչուեցաւ: Յիսուսի կեանքին մէջ ամէն ինչ՝ իր բոլոր արարքները, միշտ փոխաբերական իմաստ ունեցած են: Շատ հաւանական է, որ միւս երկու խաչեալները կը ներկայացնէին մարդու որդի Յիսուսի անհատականութեան երկու բեւեռները՝ մին դրական, հաղորդութեան մէջ իր ճշմարիտ էութեան Քրիստոսի հետ, իսկ միւսն ալ՝ ժխտական, իր «Ես»-ը: Երբ Յիսուսի անհատականութեան Քրիստոսի հետ ունեցած հաղորդութեան կապը խզուեցաւ, միթէ մարդու որդին Յիսուս չ'աղաղակեց:

«Եւ յիննէրորդ ժամոռն աղաղակեալց Յիսուս» 'ի
յայն մեծ՝ Եւ ասէ. Ե'ղի՝ Ե'ղի՝ զամա սաբալ-

Դանի. որ Դարգմանի. Լսորո-ա՛ծ իմ, Լսորո-ա՛ծ իմ, ընդէ՛ր Դողեր պիտի» : (Մարկոս ԺԵ:34)

«Իններորդ ժամուն՝ Յիսուս բարձրաձայն գոչեց. «Էլ ու՛րի՛, Էլ ու՛րի՛, լամա՞ սաբաքթանի», որ կը թարգմանուի. «Իմ Աստուա՛ծս՝ իմ Աստուա՛ծս՝ ինչ ո՞ւր է քեցիր զիս»»:

Այն ատեն ձախ կողմի խաչեալը՝ Իր «Ես»-ը առիթը չփախցուց ու ըսաւ. «Դուն Աստուծոյ Որդի ես խաչէն վար իջիր քեզ ազատէ եւ մեզ ալ ազատէ»: Միթէ այս ընթացքը եսասիրութեան օրինակ մը չէ՞: Իսկ աջ կողմի խաչեալը արդար էր եւ արժանացաւ յարու-թեան: Մենք ալ պէտք է ուշադիր ըլլանք, որ մեր անհա-տականութիւնը չի հետեւի մեր «Ես»-ին եւ չ'ըլլայ եսասէր, այլ հետեւի, յարի եւ փարի Քրիստոսի, որպէս-զի ըլլայ արդար եւ նաեւ արժանի յարութեան: Ծիշդ ասոր համար Քրիստոս ըսած է.

«Ե՛ս եմ յարո-ւթիւնն է- կեանք» : (Յովհաննոս ԺԷ:25)

«Ե՛ս եմ յարութիւնն ու կեանքը»:

Այս մասին մէջ տրուած տեղեկութիւնները որոշ չափով կրկնութիւններ են, բայց անհրաժեշտ կրկնու-թիւններ: Կրկնութիւնները, գաղափար մը լաւ հասկնա-լու եւ իւրացնելու համար, օգտակար են:

«Ե՛ս եմ Տէր որ առնեմ, կտրարեմ պամենայն» :

(Եսայայ ԽԴ:24)

«Ե՛ս եմ Տէրը, որ բոլոր բաները ըրի»:

«... է- Ե՛ս ինչէն իրադէր է- զկայ եմ ասէ

Տէր» : (Երեմիայ ԽԴ:23)

«... բայց Ես զիտեմ ու վկայ եմ, կը պատգամէ Տէրը»:

«... Ե՛ս ընդ չեզ էմ՝ ասէ Տէր» : (Ընձեայ Է:13)

«Ես ձեզի հետ եմ», կը պատգամէ Տէրը»:

«Ե՛ս եմ Հացն Կենաց» : (Յովհաննոս Գ:35)

«Ե՛ս եմ կեանքի Հացը»:

«7- Երազողը երազին մէջ չի տեսնուիր»:

«8- Երազողը երազէն Ֆիզիքապէս չ'ազդուիր»:

Որքան որ երազողը երազին մէջ չի տեսնուիր, ըստ Հին Կտակարանէն առնուած առաջին երկու մէջբերումները յայտնի կ'ընեն թէ մեր կեանքը ըստ Աստուծոյ կամքին կ'ընթանայ եւ Աստուած մեր բոլոր խորհուրդ, խօսք ու արարքներէն տեղեակ է: Աստուած տեղեակ ըլլալով մեր ապրած կեանքին՝ կենցաղին, Ան անոնցմէ չ'ազդուիր: Իսկ երրորդ մէջբերուած համարն ալ կը շեշտէ այն ճշմարտութիւնը, որ ներկայացուած էր Նախորդ մասերուն մէջ: Ինչպէս Քրիստոս ըսած էր. «Ես ձեր մէջ եմ», նմանապէս Հին Կտակարանին մէջ ալ Աստուած նոյնը ըսած է: Առանց Աստուծոյ՝ Քրիստոսի ներկայութեան մեր մէջ մենք ալ կեանք չենք ունենար, կենդանի չենք ըլլար: Ահա աս է իմաստը «Ես եմ հացն կենաց»-ին: Հացը մարմինը կը սնուցանէ, իսկ Քրիստոս՝ մարմինէն զատ նաեւ մեր ընդհանուր էութիւնը՝ մեր անհատականութիւնը, մեր միտքը, մեր գիտակցութիւնը եւ մեր իմացականութիւնը: Եթէ այս բոլորը Աստուծոյ մեզի տուած շնորհներն են, ի՞նչու կ'անտեսենք մեր ճշմարիտ էութիւնը՝ Քրիստոս եւ կը պաշտենք ուրիշ աստուած մը՝ մեր «Ես»-ը:

Ըստ բնագիտութեան ժամանակը յարաբերական է: Ան աւելի կամաց կ'անցնի երբ արագութիւնը կ'աւելնայ: Երբ արագութիւնը կը հասնի լոյսի արագութեան ժամանակն ալ չ'անցնիր: Գիտունները նաեւ փաստած են թէ ժամանակը յարաբերական է ձգողական ուժին նկատմամբ եւս: Զգողական ուժը որքան տկար ըլլայ ժամանակն ալ համեմատաբար աւելի արագ կ'ընթանայ: Նախորդ գիրքերէս «Տիեզերական Օրէնքները» գիրքին «Գիտակցութիւնը եւ ժամանակը» խորագրեալ է. գլուխին մէջ ներկայացուած էր ժամանակին յարաբերական ըլլալը նաեւ յայտնաբերուած գիտակցութեան

մակարդակին հետ եւս: Այն ինչ որ ամբողջական բնագիտութիւնը մօտաւորապէս 100 տարի առաջ ժամանակին յարաբերական ըլլալը յայտարարեց, դարեր առաջ թէ Հին եւ թէ Նոր Կտակարաններուն մէջ գրուած էր:

«Հապար ամ յաշ» Տէառն որպէս աւր երեկն պի

անց, որպէս պաճ մի Գիշերոյ»: (Սաղմոս 20:4)

«Արդարեւ Հազար տարին քու առջեւդ երեկուան պէս է՝ որ անցաւ՝ կամ դիչերուան պահու մը պէս»:(Սաղմոս 92:4)

«մի աւր Տէառն իբրեւ պաշար ամ է, եւ Հա-

պար ամ իբրեւ պի՛ աւր»:(Թոմաս Պետրոսի Բ. Գ:8)

«Տէրոջ քով՝ մէկ օրը Հազար տարուան պէս է՝ ու Հազար տարին՝ մէկ օրուան պէս»:

«9- Երազին մէջ ժամանակը աւելի արագ կ'ընթանայ»:

Ինչպէս երազին մէջ ժամանակը աւելի արագ կ'ընթանայ, եւ ժամեր կամ օրեր նոյնիսկ ամիսներ տեւող երազ մը, ըստ գիտնականներու ըրած փորձերուն ու փաստերուն, երազողին մտքին մէջ միայն կէս կամ մէկ վայրկեան տեւած է, նմանապէս մեր ներկայ «արթուն» կոչած գիտակցութեան մաս կազմող ժամանակն ալ՝ մարդուն կեանքին մօտաւորապէս 70-90 տարուայ ժամանակն ալ, իր կեանքը երազողին՝ Քրիստոսի Համար միայն ակնթարթ մը տեւած է: Մարդուն մահէն ետք իր ոգին որ միայն զօրութիւն է, կ'ընթանայ լոյսի արագութեամբ, հետեւաբար ոգիին Համար ժամանակը չ'անցնի յայտնիքն ժամանակ գոյութիւն չունենար ու ոգին ալ միայն ներկային մէջ կը գոյատեւէ: Աստուծոյ գիտակցութեան մակարդակը անհուն է, հետեւաբար այդ գիտակցութեան մակարդակին ժամանակն ալ գոյութիւն չ'ունենար: Ուրեմն մարդուն մահէն ետք կը թուի թէ ոգին իր ակին՝ Աստուծոյ կը վերադառնայ, ինչպէս «անառակ որդին վերադարձաւ իր հօր տունը»:

Ամբողջական բնագիտութեան գիտնականները այսօր փաստած են թէ միջոցը (space) եւս յարաբերական է: Միջոցին մէջ ամէն ինչ որ կը գոյատեւէ անտարակոյս ծաւալ մը ունի: Որեւէ առարկայի կամ մարմինի մը ծաւալը որոշելու համար ընդհանուր առմամբ կը բազմապատկենք առարկային երկայնքի չափը անոր լայնքի եւ նաեւ բարձրութեան չափերով: Այս երեք չափերը կը ներկայացնեն միջոցին մէջ առարկային գրաւած երեք ուղղութիւնները՝ առանցքները, որ ընդհանուր առմամբ ներկայացուած են x , y , z գիւրերով (x -երկարութիւնը, y -բարձրութիւնը եւ z -խորութիւնը): Փաստուած է թէ երբ որեւէ «մարմին» մը որքան արագ ընթանայ, ընթացած ուղղութեան առանցքին չափը երթալէն կը կարճնայ: Երբ արագութիւնը հասնի լոյսի արագութեան այդ ուղղութեան չափն ալ գէրօ կ'ըլլայ: Կարեւորութիւն չունի միւս երկու առանցքներու չափերուն անփոփոխ մնալը: Այդ մարմինն ծաւալը կ'ըլլայ գէրօ, որովհետեւ թիւ մը ինչ որ ալ ըլլայ եթէ գէրօյով բազմապատկուի պատասխանը կամ արդիւնքը միշտ գէրօ կ'ըլլայ:

Գիտունները նաեւ միացուցած են ժամանակը եւ միջոցը եւ ժամանակը կը թուի չորրորդ առանցքը ըլլալ: Նաեւ կ'ըսուի թէ անոնք՝ թէ՛ ժամանակը եւ թէ՛ ալ միջոցը, իսկութեան մէջ գոյութիւն չունին այլ մարդուն մտքին ստեղծագործութիւններն են: Եթէ թէ՛ ժամանակ եւ թէ՛ ալ միջոց գոյութիւն չունին, ի՞նչ են մեր փորձառութեան մէջ գտնուող ամէն ինչ: Պէտք է՞ որ անոնք բոլորն ալ պատրանքային երազ մը ըլլան: Միթէ աս չի համապատասխաներ Քրիստոսի ըսածին. «Միակ ճշմարտութիւնը Աստուածն է»: Այս հիման վրայ մեր կեանքն ալ կը թուի պարզապէս երազ մը ըլլալ: Հետեւաբար ինչո՞ւ վախնանք մահէն:

Այս գլուխին այս վերջին մասը հետաքրքրական է, որովհետեւ Ս. Գիրքէն մէջըբերուած երկու համարները կը թուին ոչ մէկ կապ ունենալ երազին՝ առաջին գլուխին վերջաւորութեան ներկայացուած եզրակացութիւններէն տասներորդին հետ, որ նաեւ մէջըբերուած է ստորեւ:

«Լյառ-Էրէ- որ անարգէ ո՛չ զմարդ անարգէ ալ զԼադո-աթ որ է- եր զԷրգին սորբէ ՚ի յիւ» : (Լ. Թեադոնիէցի Դ:8)

«Ուստի ան որ կ'անարգէ՝ կ'անարգէ ո՛չ թէ մարդ մը, հապա Աստուած՝ որ իր Սուրբ Հոգին ալ տուաւ մեզի»:

«Է- մի դարձո-ցանէր զմարդ ՚ի ցառապանս է- ասացեր դարձարո՛ւ աս իս որդի մարդկան» : (Սադոս 2Թ:3)

«Դուն մարդը փոշիի կը վերածես՝ եւ կ'ըսես. «վերադարձէ՛ք՝ մարդոց որդիներ»» : (Սաղմոս Դ:3)

«10- Մարդ իր ենթագիտակցութեան՝ բնույթին մէջի տեղեկութեան «պատկերով» կը ստեղծէ երազին մէջինները»:

Եթէ «ինչպէս վերը այնպէս ալ վարը» ճիշդ է եւ մարդուն երազին պարունակութեան աղբիւր միտքին՝ ուղեղին մէջ տեղադրուած ենթագիտակցութեան պարունակութեան արդիւնքն է եւ միանգամայն իր ապրած կեանքն ալ իր ներքին Քրիստոսի երազն է, ուրեմն ի՞նչ կամ ո՞ւր է իր ապրած կեանքին՝ իր կեանքի պատահարներուն աղբ: Մարդուն ճշմարիտ էութիւնը՝ Քրիստոս, Աստուծոյ զօրութեան Ս. Հոգիի ֆիզիքական արտայայտութիւնն է: Ստեղծագործութեան մէջ ամէն ինչ պարզապէս նոյն Զօրութեան զանազան արտայայտութիւններն են: Ամէն զօրութիւն իր ուրոյն թրթր-ռացումի յաճախականութիւնը ունի: Ս. Հոգիի զօրութեան զանազան արտայայտութիւններն ալ իրենց ուրոյն թրթռացումի յաճախականութիւնները ունին:

Մարդուն անհատականութիւնն ալ յաւելեալ զօրութիւն մըն է, որ Աստուած առանցնաշնորհեալ ըլլալով մարդուն տուաւ ստեղծագործութեան եօթերորդ օրը: Այդ զօրութիւնը ներկայացուած է իբրեւ Լուսաբեր հրեշտակը: Միթէ Լուսաբեր՝ մարդուն «Ես»-ը՝ Սատանան, չէ՞ր որ ուզեց «Աստուծոյ գահը» նստիլ: Մարդ նաեւ ունի ազատ կամք, հետեւաբար մարդուն անհատականութիւնը իր ազատ կամքով կ'որոշէ զինք կազմող զօրութեան թրթռացումի յաճախականութիւնը: Քրիստոս իր կամքը մարդուն չի պարտադրեր: Քրիստոս ալ երբ մեր կեանքը կ'երազէ ան կ'ըլլայ ըստ մարդուն զօրութեան մէջի տեղեկութեան, որ հոն արձանագրուած է թրթռացումի յաճախականութեան միջոցաւ: Ժիշդ ասոր համար Աւետարանին մէջ գրուած է.

«Մի՛ խաբի՛, Լսարուստ ո՛չ արհամարհի: Զի՛

պոր ինչ սերմանէ մարդ պնոյն է- Ընչէպցէ՛»:

(Գաղաթաղի՝ Զ:7-8)

«Մի՛ խաբուիք՝ Աստուած չի ծաղրուիր, որովհետեւ ի՛նչ որ մարդ կը սերմանէ՝ գա՛յն ալ պիտի հնձէ»:

Եթէ ամէն մարդու ճշմարիտ Հոգին՝ Էութիւնը Քրիստոսն է, չէ՞նք խորհիր, թէ ըստ այս մասին սկիզբը մէջբերուած առաջին համարին, երբ որեւէ բանի կամ անհատի դէմ ժխտական վարմունք մը կ'ունենանք կամ անարգանք մը կ'ընենք Աստուծոյ ըրած կ'ըլլանք: Հետեւաբար չենք խորհիր, թէ մեր ցանած այդ հունտին բերքն ալ պէտք է քաղենք: Ամէն թրթռացումի յաճախականութիւն մագնիսի նման իրեն կը քաշէ ներդաշնակ յաճախականութիւններ ունեցող զօրութիւններ՝ պատահարներ, որովհետեւ մենք ալ Աստուծոյ նոյն զօրութեան արդիւնքն ենք: Ուրեմն մարդ իր կեանքին՝ իր ներքին Քրիստոսի երազին, ակը ինք կը ստեղծէ:

Շատ հաւանական է պիտի ըլլան անձեր, որ հակասեն այս գաղափարին: Անոնք ցոյց պիտի տան ի

ծնէ թշուառութեան մէջ գտնուողները ու պիտի ըսեն. «ի՞նչ վատ հունտեր ցանեցին, որ հիմայ ալ վատ պատահարներ կը հնձեն»: Վերելի Սաղմոսէն մէջ-բերուած երկրորդ համարը կը պարզէ թէ Աստուած է, որ մարդուն կեանքը կուտայ եւ նաեւ զայն ետ կ'առնէ: «Փոշի»-ի վերածուիլը կը ներկայացնէ մարմինն մահը, իսկ «վերադարձէք» հրամայականն ալ՝ մարդուն ոգին վերամարմնացումը: Հետեւաբար մարդուն ոգին, որ մարդուն իր դրած տեղեկութիւնը պարունակող Հոգին է, կը յօրինէ մարդուն կեանքի երազը ըստ այդ տեղեկութեան, որ մնացած է անցեալ մարմնացումներէ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Եթէ միակ ճշմարտութիւնը Աստուածն է, մեր ճշմարտութիւն կարծած կեանքն ալ պէտք է պատրանքային երազ մը ըլլայ: Որպէսզի երազը գոյութիւն ունենայ երազողը պէտք է քունի մէջ ըլլայ: Մեր կեանքը երազողը մեր ճշմարիտ էութիւնը՝ Քրիստոսն է: Անկարելի է երազողը երազին մէջ տեսնել: Որպէսզի երազողը տեսնենք եւ ճշմարտութեան փորձառութիւնը ունենանք պարտ ենք, որ մեր ճշմարիտ էութիւնը քունէն արթննայ: Աստուած այս պարտականութիւնը տուաւ մարդուն անհատականութեան՝ Լուսաբեր հրեշտակին: Միթէ «Լուսաբեր» չի՞ նշանակեր «Լոյսը բերող»: Լոյսը բարձր գիտակցութիւնն է, այսինքն արթննալ: Իսկ մարդ ի՞նչ ըրաւ. իրեն տրուած պարտականութիւնը կատարելու տեղ իր անհատականութիւնը՝ իր «Ես»-ը նստեցուց Աստուծոյ գահին վրայ ու ամբողջովին անտեսեց իր ճշմարիտ էութիւնը՝ Քրիստոս: Քրիստոս ալ կը սպասէ, որ մարդ դարձեալ Զինք գատէ, այսինքն զինք իր մէջ «արթնցնէ»՝ յայտնաբերէ: Մարդն ալ իր «Ես»-ին ազդեցութեամբ կապուած աշխարհի զանազանութեան զայն կը կարծէ ճշմարտութիւն մը ըլլալ եւ

անոր ետին եղող բուն ճշմարտութիւնը չի կրնար «տեսնել»։ Աստուած ամենակարող ըլլալով հանդերձ իր կամքը չի պարտադրեր, որովհետեւ եթէ պարտադրէր մարդ ալ ազատ կամք չէր ունենար։

Ստեղծագործութիւնը սկիզբէն սկսեալ յառաջացած է ըստ Աստուծոյ դրած բարեշրջման օրէնքին։ Նախ զօրութիւնը, յետոյ նիւթը, յետոյ բոյսերը, յետոյ ձուկերը, յետոյ թռչունները, յետոյ անասունները եւ վերջապէս ստեղծագործութեան գագաթնակէտը՝ մարդը յառաջ եկան։ Բարեշրջման նպատակը, որ ընդհանուր ստեղծագործութեան նպատակն էր, Աստուածայայտնութիւնն էր։ Շնորհիւ մեր վարդապետին Յիսուս Քրիստոսի տուած տեղեկութիւններուն եւ սորվեցուցածներուն, որոշ անձեր իմացական հասկացողութիւնը ունին այս ճշմարտութեան։ Բայց միայն իմացական հասկացողութիւնը բաւարար չէ Աստուծոյ նպատակը իրականացնելու համար, կարելոր է նաեւ փորձառական գիտութեան տէր ըլլալ։ Փորձառութիւնն է, որ մեզ գիտակից կ'ընէ ճշմարտութեան հետեւաբար Աստուածայայտնութեան։

Այսօր բարեշրջումը տակաւին կը շարունակէ, բայց ոչ Ֆիզիքական գետնի վրայ այլ հոգեկան։ Մարդուն ոգին, մարմնին մահէն ետք, կը գիտակցի իր գործած բոլոր մեղքերուն եւ անոնց յառաջ բերած «պարտքերը» «վճարելու» համար յօժարաբար կը վերամարմնանայ պատշաճ մարմինով, միտքով ու վայրի մը մէջ։ «Պարտքերը վճարել» կը նշանակէ զինք կազմող զօրութեան թրթռացումի յաճախականութիւնը բարձրացնել, որ կը ներկայացնէ իր հոգեկան բարեշրջումը։

Այս կարճ ամփոփումէն վերջ նկատողութեան պիտի առնուին Ս. Գիրքէն որոշ մի քանի համարներ եւ պատշաճ տեղեկութիւններ պիտի տրուին անոնց մասին նկատի առնելով վերեւ ներկայացուած հասկացողութիւնը։

«Լյժվս Կրեմլնեմէ Խժրեւ ընդ Հայելի՝ օրինակաւ, այլ յայնժամ Դէ՛մ յանդիմանն այժմ ինչլամո՛ւ-Կրեմ փոփր ի շարիւն այլ յայնժամ Գիտապի՛ց՝ որպէս է նայն թանկաւ՝ Կիւն» : (Կարենյան Լ. ժԳ : 12)

այսինքն «Իրեն պէս պիտի ըլլանք»։ Այն ատեն մենք ալ կարող պիտի ըլլանք ըսել. «Ես եւ Հայր իմ մի եմք»։ Ճշմարտութիւնը այն է թէ մենք արդէն Զինք ենք բայց մոռցած ենք։ Այդ փորձառութիւնը պարզապէս անդրադարձ մը պիտի ըլլայ։

Իսկ եթէ կան անձեր, որ չեն համոզուած այս ճշմարտութեան, պատշաճ է կարգալ հետեւեալ համարը։

«Եթէ ո՞չ Գիտէի, զի մարմինն չէր դաճար եւս
Ընդհանրապէս որ է 'ի չեզ' զոր ունիին յԱստուծոյ։
Եւ չէի անշանց տէր ... փառասոր արարէի
զԱստուծոյ 'ի մարմինս չէր եւ յոգին չէր»։

(Լ. Կորնթացիս 9:19-20)

«Ձէ՞ք զիտե՞ր որ ձեր մարմինները տաճար են Սուրբ Հոգիին, որ ձեր մէջն է, որ Աստուծոյ առած էք ու դուք ձեր անձին տէրը չէք. ... ուստի փառաւորեցէ՛ք Աստուծոյ ձեր մարմիններուն ու Հոգիներուն մէջ, որոնք Աստուծոյ կը պատկանին»։

Այս համարին պարունակութիւնը ուղղուած է մարդուն տխմար ու խաւարամիտ անհատականութեան՝ «Ես»-ին, որ ճշմարտութիւնը հասկնալու կարողութիւնը չունի։ Եթէ Աստուծոյ մեր մէջ է, մեր մարմինը, մեր հոգին՝ մեր էութիւնը Իրեն կը պատկանին, չե՞նք խորհիր թէ մենք ալ իր զաւակները կ'ըլլանք։

Յաջորդ երկու համարները կերպով մը կրկնութիւն ու շարունակութիւնն են նախորդին։

«Ո՞չ Գիտէի եթէ դաճար էի Աստուծոյ, եւ Ընդհանրապէս

Գի Աստուծոյ բնակեալ է 'ի չեզ'։ (Լ. Կորնթացիս 9:16)

«Ձէ՞ք զիտե՞ր թէ Աստուծոյ տաճար էք դուք եւ Աստուծոյ Հոգին ձեր մէջ կը բնակի»։

«... ոչ Գայ արեւոյն-թիւն Աստուծոյ խորանով։

Եւ շատեցէն թէ աւաւասիկ աստ է՝ կամ անդ, զի աւաւ արեւոյն-թիւն Աստուծոյ 'ի ներքէն 'ի չեզ է։

(Ղաւառ ԺԷ:20-21)

«... Աստուծոյ թագաւորութիւնը դրանք երեւցած ըսներով չի գար: Օր մըն ալ պիտի չըսեն թէ 'Ահա Հոս է', կամ 'Ահա' Հոն', վասն զի Աստուծոյ թագաւորութիւնը ձեր ներսի դիմ է:»

Շատեր կը կարծեն թէ Քրիստոսի երկրորդ, այսինքն Աստուծոյ թագաւորութեան գալուստը, ամպերուն վրայէն Յիսուս Քրիստոսի գալուստը պիտի ըլլայ: Այս երկու համարներուն երկրորդը բացայայտ կ'ընէ թէ նման տեսակէտ մը սխալ է: Աստուած մեր մէջն է, Աստուծոյ թագաւորութիւնը մեր մէջն է: Հետեւաբար երկրորդ գալուստը պիտի ըլլայ իբրեւ Քրիստոսի յայտնութիւնը մեր մէջ:

Այս երկրորդ գալուստը որպէսզի մեր մէջ իրականանայ պարտ ենք մենք ըզմեզ ձեռքազատել մեր «Ես»-էն՝ Ստանալէն եւ յարիլ եւ փարիլ մեր ճշմարիտ էութեան Քրիստոսի: Ահա', աս է իմաստը յաջորդ համարին:

«Ես եմ դուռն. ընդ իս թէ ո՛վ մտնիցէ,
կեցցէ՛. մտցէ՛ եւ ելցէ, եւ ճարա՛կ գտցէ»: (Յովհաննոս Ժ:9)

«Ես եմ դուռը. եթէ մէկը ներս մտնէ ինձմէ՛ պիտի փրկուի. պիտի մտնէ ու ելլէ՛ եւ արօտ գտնէ»:

Քրիստոսի յարիլ եւ փարիլ այդ դռնէն ներս մտնելն է: Ճիշդ ասոր համար Քրիստոս ըսած էր. «Ես եմ դուռը»: Իսկ «արօտ գտնել»-ը Աստուծոյ երանութեան փորձառութիւնը ունենալն է: «Փրկուիլ»-ը շարունակական վերամարմնացումներէ ազատիլն է, Քրիստոսի միանալն է:

Այս հանգրուանին մարդ նաեւ կը ստանայ յաւելեալ Ս. Հոգիի զօրութիւն եւ շնորհները:

«... ո՛րչափ եւս առաւել Լա՛յր յեր յերկնից
դասէ Բարի՛ս այնոցիկ, որ խնդրեն ի նմանէ»: (Ղուկաս ԺԷ:13)

«... ո՛րչափ աւելի ձեր Հայրը երկինքէն Սուրբ Հոգի՛ն պիտի տայ անոնց՝ որ կը խնդրեն իրմէ»:

Այս բոլորին յաջողութեան համար պարտ ենք մենք զմեզ փոխել եւ կատարեալ ըլլալ, այն ինչ որ մեր ճշմարիտ էութիւնը է: Այս թելադրուած է հետեւեալ համարին մէջ: Նաեւ պատշաճ է կարգալ նախորդ գիրքերէս «Կատարելութեան Ուղին եւ Ի՞նչ է Չարը» խորագրեալ գիրքը:

«Լըր-եղեր՝ ա՛նի դո՛ւ չկարարեա՛լի, որդե՛ս եւ Լայ-

րըն յեր երկնաւոր կարարեա՛լ է»: (Մարգէն Ե:48)

«Ուրեմն դուք կատարեալ եղէք՝ ինչպէս ձեր երկնաւոր հայրը կատարեալ է»:

Յաջորդ երկու համարները կ'ամփոփեն ամէն ինչ:

«Ես առաջին՝ եւ ես առ յապոյ. Բայ յինէն այլ

ոչ Գոյ Լարոռա՞ք»: (Եսայայ ԽԴ:6)

«Ե՛ս եմ առաջինը ու Ե՛ս եմ վերջինը, Ինձմէ զատ Աստուած չկայ»:

«Ես եմ առաջին եւ ես եմ յաւիտեան»: (Եսայայ ԽԸ:12)

«Ե՛ս եմ առաջինը ու Ե՛ս եմ վերջինը»:

Իբրեւ վերջաւորութիւն պարտ ենք հասկնալ թէ միայն Աստուած գոյութիւն ունի եւ ոչինչ ուրիշ բան: Այն բոլոր զանազանութիւններուն, որոնց փորձառութիւնները կը կարծենք ունենալ, բոլորն ալ Աստուծոյ զանազան արտայայտութիւնները՝ երեւոյթներն են: Հետեւաբար չենք խորհիր որ ամէն ինչի հանդէպ մեր մօտեցումը պէտք է ըլլայ այն ինչ որ պիտի ըլլար Աստուծոյ նեկայութեան փորձառականօրէն գիտակից ըլլալինք: Յայտնաբերել միայն ու միայն սէր: Չար ըսուած բան գոյութիւն չունի ան պարզապէս սիրոյ պակասն է: Եթէ Աստուած մեր էութիւնն է, եթէ Աստուած մեր ներսիդին է, եթէ Աստուած սէր է, ինչո՞ւ չենք ցոլացներ այդ սէրը բոլորին: Ահա՛, աս է նպատակը մեր հոգեւոր բարեշրջման:

Այս ինչ որ Կո ՏԵՍՆԵՆՔ
մեր ԱՇԽԱՐՀԻՆ մէջ,
ՀԱՅԵԼԻԷ մո ՅՈՒՄՅՈՒՄՆ Է
Այս ինչ որ
մեր մՏՔԻՆ մէջ է



ՎԵՐՁԱԲԱՆ

Ուրեմն, ի՞նչ էր նպատակը այս գիրքին: Գիրքին պարունակութեան նպատակը հետեւեալ հարցումին պատասխանը գտնելն է: Այդ հարցումն ալ թէ՛ շատ պարզ հարցում մըն է եւ թէ՛ ալ շատ խորթին, որովհետեւ դարերէ ի վեր մարդիկ տակաւին կը շարունակեն վիճաբանիլ ճիշդ պատասխանը գտնելու համար: Այդ հարցումը հետեւեալն է. «Ո՞վ եմ ես, ո՞վ ես դուն»:

Երբ մէկը մեզի հարց տայ ըսելով. «դուն ո՞վ ես», անտարակոյս մենք, նոյնիսկ առանց խորհելու, մեր անունը կ'ըսենք: Բայց հարցումը «ի՞նչ է անունդ» չէ: Հարցը երթալէն կը բարդանայ մեր ծնողաց կամ գերդաստանին անունները կոտանք, մեր արհեստը, մեր ազգութիւնը, մեր կրօնքը եւ վերջապէս մեր ձեռքերը վեր կը բարձրացնենք ու կ'ըսենք. «չեմ գիտեր ինչ կ'ուզես»:

Ըստ այս գիրքին մէջ տրուած տեղեկութեան այդ հարցումը երկու հաւանական պատասխաններ ունի: Մին է. «Ես երազողն եմ», իսկ միւսն ալ «ես երազն եմ»: Այս գիրքը կարգալէ վերջ ըստ մեր ըմբռնումին ի՞նչ պիտի ըլլար մեր պատասխանը այդ հարցումին:

Մենք թէ՛ երազն ենք եւ թէ՛ ալ երազողը, կախում ունի ինչ անկիւնէ կը տեսնենք եւ կ'ըմբռնենք ճշմարտութիւնը: Եթէ ստեղծագործութիւնը կը դիտենք ու կը տեսնենք միայն մէկ կէտէ, պարտ ենք պատասխանել ըսելով թէ մենք երազն ենք: Բայց եթէ ստեղծագործութիւնը դիտենք ու տեսնենք 360 աստիճանէ, այն ատեն մեր պատասխանը պէտք է ըլլայ. «Ես երազողն եմ»:

Ստեղծագործութեան մէջ միայն մէկ ճշմարտութիւն կայ, Ան ալ Աստուածն է: Հետեւաբար, ստեղծագործութեան մէջի այդ բոլոր զանազանութիւնները Աստուծոյ զանազան արտայայտութիւններն են եւ կը

յայտնաբերեն Աստուածային գիտակցութիւնը զանազան մակարդակներով: Զղջիկի մը համար ճշմարտութիւնը արձագանգներու ազդեւիւր մըն է, իսկ շանաձուկի մը համար ալ՝ թրթռացումի ազդեւիւր: Ճանճ մը աշխարհը կը տեսնէ մեզմէ ամբողջովին տարբեր, որովհետեւ ան բարդ աչք մը ունի ... եւայլն: Մարդը, իր ներկայ յայտնաբերած սահմանափակ գիտակցութեամբ կապուած արտաքին աշխարհի հրապուրիչ զանազանութեան, կը կարծէ զայն ճշմարտութիւն մը ըլլալ: Որովհետեւ ան անկարող է տեսնել «երազողը» չի հաւատար անոր գոյութեան եւ կը նոյնանայ երազին հետ: Ասոր պատճառը իր յայտնաբերած ցած գիտակցութեան մակարդակն է, ան ստեղծագործութիւնը մէկ կէտէ դիտելն է: Այս հանգրուանին պատշաճ է ըսել թէ ան «երազն» է: Բայց երբ մարդ կը հաւատայ իր վարդապետին՝ Յիսուս Քրիստոսի, եւ կ'իւրացնէ ու կը գործադրէ Անոր սորվեցուցածները, ինք նախ կ'ամբարէ իմացական գիտութիւն, բայց յետոյ սորվածները իր կեանքին մէջ գործադրելով կը կերտէ աւելի բարձր գիտակցութեան մակարդակ մը եւ կը ջանայ ինքզինք «կատարեալ» ընել այն ատեն ան կը տեսնէ ստեղծագործութիւնը 360°-է եւ կը հասկնայ ամէն ինչի միականութիւնը եւ իր ալ այդ միականութեան մաս կազմելը: Աս կ'ըլլայ իր փորձառական գիտութիւնը եւ այն ատեն ինք այդ վերեւի հարցումին կը պատասխանէ ըսելով. «Ես երազողն եմ»: Այն ատեն ինք ալ կ'ըսէ. «Ես եւ Հայր իմ մի եմք»: Անտարակոյս իմացական գիտութիւնը փորձառական գիտութեան վերածելու համար կը կարօտի որոշ ջանքի, հաւատքի, յոյսի, համբերութեան, յարատեւութեան եւ անհուն սիրոյ հանդէպ ամէն ինչի եւ ամէն մարդու: Այս բոլորը մարդ պէտք է ընէ ոչ թէ «տեղ» մը հասնելու համար, այլ որպէսզի ան պարզապէս երազէն արթննայ եւ անդրադառնայ ճշմարտութեան:

Ի՞նչ է ճշմարտութիւնը, որուն անհատը պիտի անդրադառնայ: Այդ ճշմարտութիւնը ամէն ինչի միականութիւնը ըլլալն է: Այդ ճշմարտութիւնը, ինչպէս առաջուց գրուած էր, մեր փորձառութեան մէջ եղող ամէն ինչ, ամէն զանազանութիւն պարզապէս միայն Աստուծոյ զանազան արտայայտութիւնները ըլլալն է: Այս հանգրուանին պատշաճ է նոր հարցում մը եւս հարցնել. ի՞նչպէս անդրադառնալ այդ ճշմարտութեան: Միթէ ճիշդ այդ չէ՞ր, որ մարդու որդին Յիսուս նախ ինք այդ անդրադարձը ունեցաւ եւ մեզի ալ նոյնը սորվեցուց թէ՛ իր կենցաղով եւ թէ՛ ալ իր խօսքերով: Մարդու որդին Յիսուս այդ անդրադարձը ունեցաւ եւ իր մէջ յայտնաբերեց Քրիստոս Աստուծոյ Որդին: Յիսուս Քրիստոս երկու բնոյթ ունէր, մին մարդկային եւ ճիշդ ասոր համար ալ ինք միշտ ինքզինք մարդու որդի կոչած է, եւ նաեւ Աստուածային, որ Քրիստոսի իր մէջ յայտնութիւնն էր: Մեր եկեղեցւոյ Հաւատամքին մէջ այս երկու բնոյթները բացայայտ կերպով շեշտուած են: Իսկ մենք մարդու որդիները, որ այդ անդրադարձը տակաւին չենք ունեցած, քանի՞ բնոյթ ունինք: Մենք ալ երկու բնոյթներ ունինք: Անտարակոյս այդ բնոյթներէն մին, նման Յիսուսի, մեր մարդկային բնոյթն է: Իսկ մեր երկրորդ բնոյթը մեր անասնական բնոյթն է, որ կը կառավարուի մեր «Ես»-ին կողմէ: Մենք ալ Յիսուսի նման կարողութիւնը ունինք մեր մէջ Աստուածային բնոյթը յայտնաբերել: Բայց պէտք է մոռնալ Յիսուս Քրիստոսի խօսքերը ու սորվեցուցածները: Ան բացայատ ըսած է. «չէք կրնար երկու տիրոջ ծառայել»: Մարդ չի կրնալ Քրիստոս իր մէջ յայտնաբերել եթէ ինք կապուած է իր «Ես»-ին: Մարդ չի կրնար Աստուածային բնոյթ յայտնաբերել եթէ ինք ամբողջովին չէ անտեսած իր անասնական բնոյթը: Յիսուս այս երկուքը յաջողեցաւ ընել անապատին մէջ, իր

մկրտութենէն անմիջապէս վերջ երբ ինք իր «Ես»-էն՝ Սատանայէն փորձուեցաւ: Յիսուս Քրիստոս նաեւ մեզի շատ պարզ կերպով ըսաւ թէ ինչ պէտք է ընել: Ան ըսաւ. «աշակերտը պէտք է վարդապետին պէս ըլլայ»: Ուրեմն պէտք չէ՞ մենք ալ այս ուղղութեամբ ջանք ընենք, որպէսզի իրեն նման անտեսենք մեր «Ես»-ը եւ մեր անասնական բնոյթը եւ յարինք մեր ճշմարիտ էութեան Քրիստոսի: Պէտք չէ՞ որ անտեսենք երազը եւ յարինք դէպի երազողը: Պէտք չէ՞ ջանք չի խնայենք մինչեւ որ երազէն արթննանք եւ Երազողը տեսնենք եւ անդրադառնանք թէ մեր ճշմարիտ էութիւնը Երազողն է եւ ոչ պատրանքային երազին մէջի «Ես»-ը:

Հայաստանեայց Եկեղեցւոյ Գիշերային ժամերգութենէն մէջբերուած յաջորդ տողերը կը ներկայացնեն միայն մէկ տուն «Առաւօտ Լուսոյ» երգէն եւ մնացեալը մաս մը «Յիշեսցուք 'ի գիշերի» երգէն: Անոնք քունէն արթննալու, այսինքն հոգեկան քունէն՝ խաւարամտութենէ արթննալու՝ «զարթօնքի» հրաւէր են: Այս տողերուն մեկնաբանութեան համար տեսնել նախորդ գիրքերէս «Առաւօտ Լուսոյ»-ն: Այս հանգրուանին մեկնաբանութեան մէջբերումն ալ պիտի ըլլայ նաեւ միայն վերջին տողին: Եթէ ոչ ամէն առաւօտ, գոնէ ամէն կիրակի առաւօտ այս երգերը կ'երգուին.

«Չարթիր Տէր յօգնել

Չարթոյ ըզմրեալս,

Չուարթոց նմանիլ:»

«Չարթիք փառք իմ, զարթիք, եւ ես զարթեայց
առաւօտուց. Ալէլուիա:

«Չարթիք ընդ զուարթունս, մանկունք վերինն Սիօնի.

Ալէլուիա:

«Չարթիք որդիք լուսոյ, 'ի յօրհնութիւն

Հօրն լուսոյ. Ալէլուիա:

«Ձարթիք փրկեալք արեամբ, եւ տուք
զփառս փրկողին. Ալէլուիա:

«Ձարթիք նոր ժողովուրդք, նոր երգս առեալ
նորոգողին. Ալէլուիա:

«Ձարթիք Հարսունք Հոգևով, սպասեալք կալոյ Ս.
Փեսային. Ալէլուիա:

«Ձարթիք վառեալք լուսով ըստ իմաստուն Ս.
Կուսանացն. Ալէլուիա:

«Ձարթիք, պատրաստեցէք իւզ լապտերաց զջերմ
արտասուս. Ալէլուիա:

«Ձարթիք եւ մի ննջէք, նման յիմար կուսից նիրհէք.
Ալէլուիա:

«Ձարթիք երկիրպագցուք եւ արտասուողք զայս
ասասցուք. Ալէլուիա:

«Ձարթիր, ընդէ՛ր ննջես. Տէր, մի մերժեր զմեզ ի
սպառ. Ալէլուիա:»

«Վերեւ ներկայացուած տասը «Ձարթօնք»-
ները հրամաններ էին տրուած համայն մարդ-
կութեան: Հետեւաբար բոլորն ալ սկսած էին
յոգնակի հրամայականով՝ «Ձարթիք»-ով: Իսկ
վերեւի այս երկու տողի սկիզբը հրամայա-
կան չկայ, այլ կայ աղերսանք ու պաղատանք:
Ան նաեւ եզակի ըլլալով ուղղուած է մէկ
«հոգիի»: Ինչպէս վերեւ գրուած էր, եթէ
մարդուն կեանքը իր ներքին Քրիստոսի երա-
զըն է, որպէսզի անհատը Քրիստոսի փորձա-
ռութիւնը ունենայ, հարկ է որ Քրիստոս Իր
քունէն՝ երազէն արթննայ: Այս աղերսանքը
Քրիստոսի արթնութեան՝ յայտնութեան հա-
մար է: Որովհետեւ անհատը ինքզինք պատշաճ
կերպով պատրաստած կը սպասէ: Ան կ'աղօ-
թէ, կ'աղերսէ որպէսզի Քրիստոս զինք ամ-
բողջովին չմերժէ եւ քոնէ փոքր չափով իր
մէջ յայտնուի:»

Այս ուղղութեամբ պատշաճ է նաեւ մէջբերում մը ընել Խալիլ Ճիպրանի «Վարդապետին Զայնը» խորագրեալ գիրքէն մի քանի տող․

«Կեանքին ճշմարտութիւնը Կեանքը ինքն է, որուն սկիզբը արգանդին մէջ չէ եւ վախճանն ալ գերեզմանին մէջ չէ։ Որով, տարիները որ կ'անցնին ակնթարթ մըն է յաւիտենական կեանքի մէջ, եւ նիւթական աշխարհն ալ իր ընդհանուր պարունակութիւնով՝ պարզապէս երազ մըն է երբ զայն բաղդատենք զարթօնքին հետ, որ մենք կը կոչենք մահուան սոսկումը։»

Այս վերջաբանին յաջորդ մասին մէջ պիտի ներկայացուի ամփոփումներ զանազան նիւթերու մասին որոնց նպատակը ամբարել է որոշ իմացական գիտութիւն՝ հասկացողութիւն, որ պէսզի նման հասկացողութեամբ մը կերտենք պատշաճ կենցաղ մը եւ հայեացք մը ու յաջողինք մեր սխալ ըմբռնումը, թէ մենք «երազն» ենք, փորձառական գիտութեամբ փոխել ու հասկնալ, կամ աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել, անդրադառնալ թէ մենք՝ մեր ճշմարիտ էութիւնը, «երազողն» ենք։

ա- Կեանքը եւ մահը․

Ներկայ դարուս, մարդկութեան ջախջախիչ մեծամասնութիւնը, իրենց խաւարամտութեան պատճառով, իրենց կեանքով՝ կենցաղով խոտորած են ճշմարտութենէն։ Ճիշդ ասոր համար, իրենց համար կեանքն ալ վերածուած է պայքարի մը բարիի եւ չարի միջեւ, կեանքի եւ մահուան միջեւ...։ Խաւարամտութիւնը եւ խոտորումը մարդուն մտքին մէջ կը ստեղծեն

երկուութիւն: Մարդն ալ երազին մաս կը կազմէ եւ զայն ճշմարտութիւն կը կարծէ:

Տիեզերքի մէջ միայն մէկ կեանք ու մէկ գիտակցութիւն (consciousness) կայ, անոնք ալ Աստուծոյ ներկայութիւնն են, որ ընդհանուր ստեղծագործութիւնը՝ ստեղծագործութեան մէջ ամէն ինչ, կը յայտնաբերեն զանոնք զանազան մակարդակներով՝ աստիճաններով: Իսկ մենք կը կարծենք թէ մեր կեանքը տարբեր է ուրիշ անձի մը կեանքէն: Շատ հաւանական է, որ մեր կենցաղը տարբեր ըլլայ, բայց՝ ոչ մեր կեանքը: Հետեւաբար ինչ որ կ'ընենք որեւէ բոյսի անասունի եւ որեւէ մարդու այդ կեանքին է որ կ'ընենք: Բայց մեր կեանքն ալ այդ նոյն կեանքն է: Ուրեմն, արդեօք պէտք է՞ զարմանք պատճառէ թէ «ինչ որ ցանենք նոյնը կը հնձենք»: Մարդ արարած նաեւ կը կարծէ թէ կեանքը ժամանակաւոր է եւ վերջ կը գտնէ մահով, հետեւաբար կը վախնայ մահէն: Կեանքին ալը մարդուն «մահն» է, այսինքն երազին վերջը: Մահը պարզապէս վերջ տալ է պատրանքային միջոցին եւ ժամանակին: Անմահութիւն՝ յաւիտենական կեանքը ժամանակի դրութենէ դուրս ըլլալն է: Մահը թէ՛ օգտակար եւ թէ՛ ալ զգաստացուցիչ եւ ուղղիչ պատահմունք մըն է: Մարդ մահէն պէտք չէ վախնայ: Ան կը վախնայ որովհետեւ կապուած է «երազին» եւ չ'ուզեր որ երազը վերջանայ: Նման վախը Աստուածային ճշմարտութեան խեղաթիւրումն է: Ընդհանուր առմամբ մարդ կը կարծէ թէ մահը վատ արարք մըն է, բայց ան կրնայ օրհնութիւն մը, երանութեան պատճառ մը ըլլալ: Իսկութեան մէջ մահը վերահաստատում մըն է: Ան թէ՛ Ֆիզիքական

մարմնի եւ թէ՛ ալ միտքի ազդեցութիւններէն ազատիլն է: Մահուամբ մարմինը կը վերադառնայ իր աղին հողին եւ հոգին ալ իր աղին՝ Աստուծոյ: Մահը քաւութեան միջոցն է: Ուրեմն ի՞նչ է կեանքին իմաստը. Անցեալին իմաստուն մէկը ըսած էր. «Կեանքը իմաստ մը չունի, բայց ան առիթը կուտայ որպէսզի զայն իմաստաւորենք»: Հետեւաբար, կը թուի թէ ամէն մարդինք պատասխանատու է իր կեանքէն: Իր կեանքին եւ իր ճակատագրին ճարտարապետը ինքն է: Ամենաբարձր իմաստութիւնը գիտնալ է թէ ոչինչ գիտենք, հետեւաբար պարտ ենք մեր կեանքը իմաստաւորել շարունակ պրպտելով մինչեւ որ գտնենք կեանքին նպատակը, որ «երազէն» արթննալն է:

բ- Յարութիւն եւ Յաւիտենական Կեանք.

Այսօր շատ մը քարոզչութիւններ կ'իմանանք նկատմամբ յաւիտենական կեանքի: Անոնք պարզապէս կը քարոզեն ըսելով. «Հաւատա՛ ու պիտի փրկուիս»: Շատեր կը կարծեն թէ յաւիտենական կեանքը պիտի գայ աշխարհի վերջը երբ Յիսուս Քրիստոս ամպերուն վրայէն իր զօրքերով գայ: Այն ժամանակ «հաւատացեալին» Ֆիզիքական մարմինը գերեզմանէն դուրս պիտի ելլէ, այսինքն յարութիւն պիտի առնէ, մարմինով երկինք պիտի երթայ ու յաւիտեան՝ անվերջ ժամանակ երջանիկ պիտի ապրի: Նման հասկացողութիւն մը կը յայտնէ թէ անձը տակաւին իր ֆիզիքական մարմնին փարած կը կարծէ թէ ինք իր մարմինն է, կը կարծէ թէ ինք «երազն» է, քան թէ՝ իր մարմինը գործածողը, իր «երազը» «երազողը»: Նման հայեացքը կը յայտնէ թէ անձը կապուած է «երազին»,

բայց որովհետեւ ան նաեւ կը տեսնէ թէ մահը անխուսաբելի իրողութիւն մըն է ինք կ'ուզէ նոյն երազը շարունակել նոյնիսկ մահէն վերջ:

Նախ պէտք է հասկնալ թէ յաւիտենականութիւնը անվերջ ժամանակ չէ այլ ժամանակի դրութենէ դուրս ըլլալն է: Ժամանակը երազին մաս կը կազմէ: Միայն ներկան յաւիտենական է: Աստուած յաւիտեան է եւ միայն ներկային մէջ: Ճիշդ ասոր համար Ս. Գիրքին մէջ նաեւ գրուած է թէ Քրիստոս ըսած է. «Աբրահամէն առաջ եմ ես»: Աբրահամ Յիսուսէն հազարներ տարի առաջ ապրած էր, բայց «ես եմ»-ը կը ներկայացնէ ներկան, որովհետեւ Աստուծոյ՝ Քրիստոսի համար անցեալ եւ ապագայ գոյութիւն չունին, այլ՝ միայն ներկան:

Ուրեմն ի՞նչ է յաւիտենական կեանքը: Մարդուն համար յաւիտենական կեանքը կարելի է միայն երբ ան յարութիւն առնէ: Ուրեմն ի՞նչ է յարութիւնը: Եթէ յարութիւնը մարմինն վերակազմուելով գերեզմանէն դուրս գալը չէ, ի՞նչ բան է որ յարութիւն կ'առնէ: Եթէ յարութիւն առնողը մարդուն մարմինը չէ եւ իր Հոգին ու ոգին ալ անմահ են, ուրեմն ի՞նչ բան յարութիւն կ'առնէ: Աւետարանին մէջ նաեւ գրուած է.

«Զի Խաչակն մեղաց մահ է»: (Հովհաննէս .9:23)

«Որովհետեւ մեղքին վարձատրութիւնը մահ է»:

Յիսուս անմեղ էր բայց մարմինը մեռաւ եւ երեք օրուայ մէջ մարմինը կազմող նիւթը զօրութեան փոխուեցաւ եւ անհետացաւ: Պէտք չէ մոռնալ թէ նիւթը զօրութենէ յառաջ եկած է: Այս ուղղութեամբ պատշաճ է կարդալ նախքին գիրքերէս «Աւետարանի Խորհուրդները Ա.

- Յիսուսի Կեանքէն Դրուագներ» գիրքին մէջ էջեր 158-163: Ըստ յաջորդ համարին ի՞նչ էր, որ մեռաւ ու յարութիւն առաւ:

Հետեւեալ երկու մէջբերումները առնուած Ս. Գիրքէն բացայայտ կ'ընեն թէ ինչ է յարութիւնը:

Մեղաւորին անհատականութիւնն է, որ կը մեռնի: Եթէ անձը Յիսուսի նման իր պարտականութիւնը լաւ կատարած է արժանի կ'ըլլայ իր անհատականութեան յարութեան եւ կը լուծուի Քրիստոսի մէջ եւ կապրի յաւիտենականութեան երանութեան մէջ:

«... Զի թէպէտ է- մեռ-աւ մարմնով այլ կենդանի՛ է Հոգի-ով»: (Լ. Թո-ղ Պեղորոհի Գ:18)
«... Ան մարմինով մեռցուեցաւ, բայց Հոգիով կեանք ստացաւ»:

«Յառաջագո՛յն ծանոցեալ խօսեցաւ զան յարո-թեանն Քրիստոսի. զի ո՛չ թողաւ հոգի նորա ՚ի դժոխս է- ո՛չ մարմին նորա էրեւ պապականութիւն»:

(Գործի առաքելոց Բ:31)

«Ինք կանխատեսութեամբ խօսեցաւ Քրիստոսի յարութեան մասին՝ թէ անոր անձը ղժողքը չմնաց եւ անոր մարմինը ապականութիւն չտեսաւ»:

Նաեւ կ'ըսենք թէ Յիսուս իր մահէն երեք օր ետք յարութիւն առաւ:

«Եւ ասէ ցՅիսոս-ս. Յիշեա՛ զիս Տէր՝ յոր ժամ գայցես արեւոյս-թեամբ ինձ: Եւ ասէ ցնա Յիսոս-ս. Լմէն ասեմ ինչ. այսօր ընդ ի՛ն իցես ՚ի դրախդին»:

(Լուկաս ԻԳ:42-43)
«Եւ ըսաւ Յիսուսի. «Տէ՛ր, յիշէ՛ զիս՝ երբ դաս քու թագաւորութեամբը»: Յիսուս ալ ըսաւ անոր. «Ճշմարտապէս կը յայտարարեմ քեզի. Դուն ա՛յսօր ինծի Հետ պիտի ըլլաս դրախտին մէջ»»:

Այս համարն ալ բացայայտ կ'ըսէ թէ Յի-

սուսի անհատականութիւնը յարուժիւն առաւ մահէն անմիջապէս վերջ եւ ներկային մէջ եւ ոչ ապագային: Յարուժիւնը կարելի է միայն երբ անձը ինքզինք ձերբազատած է նիւթապաշտութենէ եւ իր «Ես»-էն, այսինքն եսասիրութենէ: Յարուժիւնը յաղթել է մահուան: Ան արթննալ է «երազէն»: Յարուժիւնը նաեւ կը ներկայացնէ փրկութիւնը: Ի՞նչ է փրկութիւնը: Ինչէ՞ որ պիտի փրկուինք: Փրկութիւնը կեանքի եւ մահուան շարունակականութեան վերջ տալն է: Մարդուն ոգին անմահ է, բայց իր մէջ անհատին խորհուրդ, խօսք ու արարքներուն հետեւանք որոշ տեղեկութիւն կը պարունակէ եւ ըստ այդ տեղեկութեան նաեւ կը վերամարմնանայ: Այս վերամարմնացող ոգիին պարունակած տեղեկութիւնը պատճառն է տարբերակ ծնունդներու, ապա թէ ոչ, եթէ միայն մէկ կեանք ըլլար, ամէն մարդ պէտք էր հաւասար ծնէին թէ մարմինով, թէ միտքով եւ թէ ալ իմացականութեամբ: «Ինչ որ ցանենք նոյնը կը հնձենք»:

Գ- Ի՞նչպէս Արժանանալ Փրկութեան ու Յաւիտենական Կեանքի:

Այս ուղղութեամբ Յիսուս Քրիստոս մեզի լաւագոյն կերպով թէ իր կենցաղով եւ թէ ալ իր խօսքերով մեզի սորվեցուց: Պարտ ենք իրեն նմանիլ եւ մեր երկնաւոր Հօր պէս կատարեալ ըլլալ: Այս ուղղութեամբ յաճնարարելի է կարդալ նախորդ գիրքերէս «Կատարելութեան Ուղին եւ Ի՞նչ է Չարը» խորագրեալ գիրքս:

Աղօթք.- Քրիստոսի Լոյսը մեզ առաջնորդէ պատրանքէն դէպի Ճշմարտութիւն, մահէն դէպի Կեանք, երազէն դէպի Երազողին: Ամէն



Եթէ Կ'ուշես

ԸՆԴՀԱՆՈՐ ՍԱՐԴԱՊՈԹԻՒՆԸ ԱՐԹԱՅՆԵԼ,
ԴՈՒՆ ՔԵՉ ԼՐԻՒ ԱՐԹԱՅՈՐ:

Եթէ Կ'ուշես

ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱՅԷՆ ՏԱՊԱՊԱՆՔԸ ՎՏԱՐԵԼ,
ՎՏԱՐԷ ԱՅՆ ԻՆՉ ՈՐ ՍՈՒԹ ՈՒ ԺՆՏԱԿԱՆ Է
ՔՈՒ ՍԷՉԴ:

ԻՍԿԱՊԷՆ, ԼԱՎԳՈՅՆ ՆՈՒԷՐԸ,

ՈՐ ԿՐԱՆԱ ՏԱԼ,

ՔՈՒ ԱՆՁՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒԹԻՒՆԿ Է:

ԼԱՕ ՅՈՒ

-Lao Tzu





-Ե-

ՅԱԲԵԼՈՒԱԾԱԿԱՆ

*

Ա - Վագրը և Էռ

Բ - Մոհրածպան Թագաւորը

Գ - Էռ Հորին Մէջ

Դ - Թագաւոր Մոհրը

Ե - Զորի Աստղ

Զ - Հսոսա Հայրապետ



ԷՇՈՒՆ ՀԵՏ ՄԻ ՎԻՃԱԲԱՆՈՒՐ



Էշը վազորին կըսէ.

–«Խոտը կապոյտ է»:

Վազորը կը պատասխանէ.

–«Ոչ, խոտը կանանչ է»:

Վիճաբանութիւնը երթալէն կը սաստկանայ: Միասնաբար կ'որոշեն հարցը թագաւորին ներկայացընել որպէսզի հարցը վճռականօրէն լուծուի: Այս նպատակով կը դիմեն առիւծին՝ անտարի թագաւորին: Տակաւին թագաւորին գահին չմօտեցած, հեռուէն եշը կը սկսի պոռալ.

–«Տէր իմ, ճիշդ չէ՞, թէ խոտը կապոյտ է»:

Առիւծը կը պատասխանէ.

–«Ճիշդ ես, խոտը կապոյտ է»:

Էշը անմիջապէս կը շարունակէ ու կ'ըսէ.

–«Վազորը ինծի համաձայն չէ եւ անպատշաճօրէն կը պնդէ, թէ խոտը կանանչ է եւ զիս կը նեղէ: Հաճիս պատժէ զինք»:

Թագաւորը կը յայտարարէ.

–«Վազորը հինգ տարուայ լռութեամբ պատժուած է»:

Էշը ուրախ զուարթ ցատկոտելով կը հեռանայ, յաճախ կրկնելով.

–«Խոտը կապոյտ է ...»:

Վազորը իրեն տրուած պատիժը կ'ընդունի, բայց առիւծին հարց կու տայ ըսելով.

–«Արքայ իմ, ինչո՞ւ զիս պատժեցիր, դուն ալ շատ լաւ գիտես, թէ խոտը կանանչ է»:

Առիւծը կը պատասխանէ.

-«Ճիշդ է, թէ խոտը կանանչ է»:

Վազրը զարմացած դարձեալ կը հարցնէ.

-«Եթէ խոտը կանանչ է, զիս ինչո՞ւ կը պատժես»:

Առիւծը կը պատասխանէ.

-«Քու պատիժդ խոտին կանանչ կամ կապոյտ ըլլալուն հետ ոչ մէկ կապ ունի: Քու պատիժիդ պատճառը այն է, թէ քեզի պէս քաջ եւ խելացի արարածի մը հշու մը հետ վիճաբանելով ժամանակդ վատնած ըլլալուդ համար է, ինչպէս նաեւ նման անիմաստ վիճաբանութեամբ հոս գալով զիս ժամավաճառ ընելուդ համար է»:

Ամենաշատ եւ ամենավատ ժամանակի վատնումը տիմարի ու մոլեռանդի մը, որ հոգը չէ թէ ինչ է ճշմարտութիւնը կամ իրողութիւնը ու կը փարի միայն իր պատրանքային հաւատալիքներուն (beliefs), հետ վիճաբանին է: Անտրամաբան վիճաբանութիւններով ժամերդ մի վատներ: Կան ոմանք, որոնք հակառակ իրենց ներկայացուած բազմաթիւ փաստերուն անկարող են հասկնալ, իսկ ուրիշներ՝ իրենց «Ես»երուն ազդեցութեան տակ կոյր, ատելութեամբ լի եւ զայրութեամբ միայն իրենց տեսակէտին ճիշդ ըլլալը կ'ուզեն, նոյնիսկ երբ բացայայտօրէն իրենց հաւատացածները սխալ են:

Երբ տգիտութիւնը կը պոռայ, իմացականութիւնը կը լռէ: Ձեր խաղաղութիւնը եւ անդորրութիւնը շատ աւելի կ'արժէ:





ՄՈՒՐԱՅԿԱՆ ԹԱԳԱՒՈՐԸ

Ատենօք երկրի մը մէջ թագաւոր մը կ'իշխէր բայց զաւակ մը չունէր որպէսզի իր մահէն ետք գահը բարձրանայ: Բաւական հասուն տարիք մը ունենալուն թագաւորը ուզեց յարմար ժառանգորդ մը փնտռել, ուստի ազդարարութիւններ ղրկեց բոլոր երկրի տարածքին եւ իր հետ տեսակցութեան հրաւիրեց երկրին մէջ գտնուող իւրաքանչիւր երիտասարդին, որ պիտի լրացնէր որակեալ պայմաններ: Այսպէսով թագաւորը այս տեսակցութիւններու հետեւանք պիտի կարենար իր գահին համար ժառանգորդ մը ընտրել, միայն թէ թեկնածուն պիտի ունենար պայման մը, որ է՝ անսահման սէր հանդէպ բոլոր մարդկութեան:

Իւրաքանչիւր երիտասարդ երկրի տարածքին շատ յոյսով ու եռանդով էր, որ թերեւս պիտի կարենար երկրին թագաւորը ըլլալ: Հեռաւոր գիւղէ մը աղքատ երիտասարդ մը նաեւ այդ լուրը կը կարգայ եւ կը սկսի պատրաստուիլ երթալու եւ տեսակցելու թագաւորին հետ: Երիտասարդ մարդը շատ ազնիւ ու ծայր աստիճան աշխատասէր տղայ մըն էր, բայց զանազան պարա-

զաներու հետեւանք՝ շատ աղքատ: Ան թագաւորին առջեւ ներկայանալու պատշաճ զգեստներ չունէր: Ուրեմն, դէպի պալատ իր երկար ճամբորդութեան համար, նոր զգեստներ եւ պաշար հայթայթելու նպատակով ան չարաչար կ'աշխատի ու դրամ կը խնայէ:

Բոլոր իր պէտքերը ապահովելէ ետք ճամբայ կ'ելլէ, երկար օրեր կը ճամբորդէ եւ հազիւ վերջաւորութեան հասած, ճամբուն եզերքը նստած մուրացկանի մը կը հանդիպի: Մուրացկանը ցուրտէն իր ցնցոտիներուն մէջ կը դողդղար, իր թեւերը կ'երկարէր եւ օգնութիւն կ'աղերսէր ու իր տկար ձայնով կ'ըսէր. «անօթի եմ եւ կը մսիմ, խնդրեմ օգնէ ինծի պարոն»:

Երիտասարդը մուրացկանին այս խեղճ վիճակէն ազդուելով անմիջապէս իր նոր հագուստները կը հանէ եւ անոր կուտայ, նաեւ ճամբորդութեան ընթացքին իր հետ առած սահմանափակ ուտելիքները կուտայ իրեն: Մուրացկանը անսահման շնորհակալութիւն կը յայտնէ երիտասարդին: Երիտասարդ մարդը պահ մը կը տատամսի, իր ներկայ վիճակով ներկայանալու թագաւորին, սակայն եւ այնպէս իր ուժերը կը հաւաքէ ու իր հին, աղտոտ հագուստներով կը մտնէ պալատ: Թագաւորին օգնականը զինք մեծ սրահը կ'առաջնորդէ: Կարճ դադարէ մը վերջ ճամբորդութեան կեղտը մաքրելէ յետոյ տեսակցութեան համար թագաւորին սենեակը կ'ընդունուի:

Երբ թագաւորը մուտք կը գործէ սենեակէն ներս, երիտասարդը կը խոնարհի ցած, մինչեւ գետին, երբ աչքերը կը բարձրացնէ զարմանքը մեծ կ'ըլլայ երբ կը նշմարէ թէ թագաւորը ճիշդ ճամբու եզրին հանդիպած մուրացկանին կը նմանի: Թագաւորը կը տեսնէ մարդուն զարմանքը ու կ'ըսէ. «Այո, ես այն մուրացկանն էի, որ հանդիպեցար ճամբու վրայ»: Տղան, անդորրութիւնը գտնելէ վերջ, թոթովելով կ'ըսէ. «Բա... բա... բայց

ինչո՞ւ այդպէս մուրացկանի պէս հագուած էիք: Դուք թագաւոր մըն էք: Լաւ, բայց ինչո՞ւ այդպէս ըրիք ինծի»:

Թագաւորը կը պատասխանէ. «Որովհետեւ վստահ ըլլալ ուզեցի որ գլխասիրտ էիր եւ մարդկութեան հանդէպ ճշմարիտ սէր ունէիր: Գիտէի որ եթէ հարցնէի ասոնք, զիս տպաւորելու համար ամէն բան պիտի ընէիր, բայց այդ ձեւով սրտիդ մէջի բուն զգացումները բնաւ պիտի չհասկնայի: Հետեւաբար խորամանկութիւն մը օգտագործեցի, որովհետեւ մուրացկանը ոչինչ ունէր քեզի հրամցնելիք: Վեհանձնութիւնը, առատաձեռնութիւնը եւ սէրը կարիքաւորներու հանդէպ առանց փոխադարձը ակնկալելու, ազնիւ հոգի ունենալու նշան մըն է: Մուրացկանին հանդէպ քու ցոյց տուած սէրն ու առատաձեռնութիւնը հաստատեց, որ դուն անկեղծութեամբ կը սիրես ժողովուրդը: Այս երկիրը պէտք ունի առաջնորդի մը, որ իր ազգին բարօրութեան համար աշխատի եւ ոչ թէ միայն անոնց համար, որոնք ընծաներ, ծառայութիւններ եւ հաճոյք հայթայթեն գահին: Դուն փաստեցիր որ ճիշդ անձն ես որ պիտի յաջորդէ զիս» ըսելով կը խոստանայ թագաւորը:





ԵՐԿՐԱԳՈՐԾԸ ԵՒ ԻՐ ԷՇԸ

Օր մը երկրագործին էշը հորը կ'իյնայ: Էշը խղճալիօրէն կը զուար, մինչ երկրագործը կը ջանար ճար մը գտնել: Վերջապէս ան կ'որոշէ թէ էշը արդէն ծեր էր եւ հորն ալ գոցուելու դատապարտուած, հետեւաբար էշը դուրս հանելու համար այդքան նեղութիւն կրել չէր արժեք:

Երկրագործը բոլոր դրացիները իրեն օգնելու կը հրաւիրէ: Ամէն մէկը թի մը առնելով կը սկսին հող նետել հորին մէջ: Նախ էշը հասկնալով եղածը կը սկսի ահռելիօրէն զուար, իսկ վերջը բոլորին իբրեւ զարմանք էշը կը լռէ:

Մի քանի թի հող նետելէ ետք, երկրագործը վերջապէս հորը կը նայի ու կ'ապշի: Ամէն մի թի հողը որ էշուն կռնակին վրայ կ'իյնար, էշը զարմանալի բան մը կ'ընէր, ան հողը իր վրայէն կը թոթուէր եւ քայլ մը վեր կը բարձրանար:

Քանի երկրագործին դրացիները կը շարունակէին հող նետել անասունին վրայ, ան ալ հողը կը թոթուէր վրայէն ու քայլ մը եւս կը բարձրանար: Կարճ ժամանակ

յետոյ բոլորն ալ զարմացած մնացին երբ եչը հորէն դուրս ելաւ եւ ուախ զուարթ ընդոստ քայլերով հեռացաւ:

Կեանքի մեջ ամէն տեսակ դժուարութիւններու, նեղութիւններու կը հանդիպինք, ասոնցմէ դուրս ելլելու, փրկուելու գաղտնիքը մեր վրայէն այդ նեղութիւնները թոթուելն է ու քայլ մը վեր բարձրանալն է: Մեր դժուարութիւններուն ամէն մէկը յառաջդիմութեան միջոց մըն է: Կարելիութիւնը ունինք ամենախորրունկ հորէն դուրս գալու եթէ չի յուսահատինք եւ յարատեւենք: Թոթուէ՛ եւ քայլ մը վեր բարձրացիր: Յ.Գ.

Պոլսոյ մէջ մեծնալուս, էշու շատ կապուած եմ: Տեսած եմ փողոցներուն մէջ անոնց կրած ծանր բեռները՝ ջուր, ուտեստեղէն, տոպրակներով ցորեն, շինութեան համար աղիւս, ծրարներով վառելիքայտ եւայլն:

էշը, ճերմակէն մինչեւ մոխրագոյն փայլուն մորթով, իր յատուկ զուարով, ուշադիր մեծ ականջներով, մեծ մեղմ աչքերով, իմաստուն արտայայտութիւններով, առանց բառերու զգացումներ կը յայտարարէ: Գրաւիչօրէն գեղեցիկ է:

Կը թուի թէ իր հոգեպայծառ աչքերու ետին չըսուած պատմութիւններու հարստութիւն մը կը զըտնուի, ինչպէս նաեւ սերունդէ սերունդ անցած հնադարեան իմաստութիւն: Այս բեռնակիր հեզ էշը Ս. Գրքին մէջ մասնաւոր տեղ մը ունի: Ան հոն յիշուած է 131 անգամ:

Մեր Տէրը Յիսուս, իր խաչելութենէն առաջ, մասնաւորաբար ընտրեց էշը ու անոր վրայ նստած Երուսաղէմ մտաւ: Այս արարքը ցոյց կուտար իր առաքելութիւնը՝ հեզ Ծառայ-Թագաւորը, որ կ'իշխէր խաղաղութեամբ եւ ոչ պատերազմելով:

Ոչ փրկուելու համար այլ փրկելու համար:



ԹԱՓԱԾ ՍՈՒՐՃԸ

Ձեռքդ գալաթ մը սուրճ կայ, քովէդ անցնող մէկը թելիդ կը զարնուի եւ սուրճը ամէն կողմ կը թափի:

Ինչո՞ւ սուրճը թափեցիր: «Որովհետեւ մէկը թելիս զարկաւ»: Սխալ պատասխան:

Դուն սուրճը թափեցիր, որովհետեւ գալաթիդ մէջ սուրճ կար: Եթէ գալաթիդ մէջ թէյ ըլլար, թէյ թափած պիտի ըլլայիր: Այն ինչ որ գալաթին մէջ է, միայն ան է որ կը թափի:

Հետեւաբար, երբ կեանքը քեզի ցնցէ, որ անտարակոյս պիտի ըլլայ, այն ինչ որ քու մէջդ է դուրս կը թափի ու կը յայտնուի: Կեանքը կը թուի դիւրին ըլլալ մինչեւ որ ցնցուինք:

Ուրեմն մենք մեզի հարց պէտք է տանք. «Ի՞նչ կայ իմ «գալաթիս» մէջ: Երբ կեանքը մեզ ցնցէ, մեր գալաթէն ի՞նչ պիտի թափի. Ուրախութիւն, երախտագիտութիւն, խաղաղութիւն եւ հեզութիւն, կամ՝ բարկութիւն, դառնութիւն, զոհ ըլլալու մտայնութիւն եւ յուսահատութիւն»:

Կեանքը մեզի կու տայ «գալաթը», մենք կ'որոշենք թէ զայն ինչով պիտի լեցնենք: Այսօր, որոշենք մեր գալաթը լեցնել երախտագիտութեամբ, ներողամտութեամբ, ուրախութեամբ, դրական հաստատամտութեամբ, տոկունութեամբ, ազնուութեամբ, մեղմութեամբ, քաղցրութեամբ եւ սէր հանդէպ բոլորին:



ՋՈՒՐԻ ԱՆՕԹԸ

Տարիքոտ կին մը երկու մեծ անօթներ ունէր, երկուքն ալ երկար ձողի մը երկու ծայրերէն կախուած իր ուսերուն վրայ կը կրէր:

Անօթներէն մին թեթեւ մը ճաթած էր, իսկ միւսը կատարեալ ու միշտ ջուրով լեցուն տուն կը հասնէր:

Գետէն մինչեւ տուն երկար ճամբորդութեան միջոցին, ճաթած անօթը տուն կը հասնէր ջուրով միայն կէս լեցուն: Երկու տարի ծերուկ կիներ միշտ տուն մէկ-ու-կէս անօթ ջուր կը բերէր:

Անտարակոյս, կատարեալ անօթը ինքզինք միշտ հպարտ կը զգար: Բայց խեղճ ճաթած անօթը իր թերութեան համար ամօթ կը զգար ու կը տխրէր, որ չէր կրնար իր պարտականութիւնը պատշաճ կերպով կատարել:

Երկու տարի վերջ իր ճախորդութեան հետեւանք տխրած, օր մը գետին քով կնոջ կ'ըսէ. «Ես ինձմէ կ'ամչնամ, որովհետեւ այս իմ քովիս ճաթածութիւնը պատճառ կ'ըլլայ որ մինչեւ տուն հասնինք ջուրըին կէսը դուրս կը վազէ»:

Ծերուկ կիներ կը ժպտի ու կ'ըսէ. «Ուշադրութիւն ըրի՞ր, ճամբուն քու կողմիդ վրայ ծաղիկներ կան, բայց ոչ միւս անօթին կողմը, որովհետեւ ես միշտ տեղեակ եղած եմ քու ունեցած թերութեանդ նկատմամբ, հետեւաբար ճամբուն քու կողմի ծաղիկներու հունտեր ցանեցի: Ամէն օր երբ տուն կը վերադառնանք դուն զանոնք կը ջրես»:

«Երկու տարի է, որ ես այդ ծաղիկները կը հաւաքեմ ու սեղանս կը զարդարեմ: Առանց քեզի, այն ինչ որ դուն ես, անկարելի պիտի ըլլար մեր տան մէջ այդ գեղեցկութիւնն ու շնորհքը ունենալ»:

Պատմութենէն սորվելիք դասը.

Ամէն անհատ իր ուրոյն թերութիւնները ունի: Բայց թերութիւններն են, որ բոլորիս կեանքերը միասնաբար թէ՛ հետաքրքրական եւ թէ՛ ալ արդիւնաբեր կ'ընեն: Պարտ ենք ամէն մարդ ընդունիլ այնպէս ինչպէս որ են եւ լաւատես ըլլալ ու անոնց մէջ բարին տեսնել:



ՇՆՈՒՏԱ ՀԱՅՐԱՊԵՏԸ

• Առիթով մը հանդիպեցայ Շնուտա Հայրապետին եւ հարցուցի անոր.

- Ձերդ Սրբութիւն, կրնա՞մ հարցում մը հարցնել:

Ինչպէ՞ս է որ ներքնապէս միշտ խաղաղ եւ զուարթ էք, հակառակ եկեղեցւոյ ամենօրեայ դիմագրաւած խնդիրներուն: Ձերդ Սրբութիւն, մենք չե՛նք կրնար աչք բանալ մէկ խնդիրէն մինչեւ միւս խնդիրը:

Ան պատասխանեց ինծի.

- Նայէ՛ Տէր Հայր. ես սովորութիւն ըրած եմ իւրաքանչիւր խնդրի համար աղօթել՝ անգամ մը, երկու եւ երեք...: Երբորդ անգամէն ետք, մեր Տիրոջ կ'ըսեմ. ո՛վ Տէր, ես աղօթեցի Քեզի ու խնդրեցի Քեզմէ, ինչպէս նաեւ ծանօթացուցի Քեզի իւրաքանչիւր խնդրին հետ: Արդարեւ, այլեւս Քովդ ես..., եւ ահա Դուն ու Քու ժողովուրդդ, Դուն եւ Քու եկեղեցիդ, Դուն վարուէ...:

Իսկ երբ ոեւէ մէկը կը հանդիպի ինծի, կ'ըսեմ անոնց. մեր Տէրը պիտի վարուի, որովհետեւ տուեալ խնդիրը Իր մօտն է (Հայր Պուլուս ճորճ):

• Մեր կեանքը կը հաշուուի միայն այն օրերով, որոնք Տիրոջ հետ անցուցած ենք, հաստատ մնալով Անոր սիրոյն մէջ: Իսկ մեր կեանքի ընթացքին մեղքի շրջանները, մահուան շրջաններ են:

• Ով որ կը հաւատայ Աստուծոյ եւ Անոր տուած պարգեւներուն, Անոր գիրկին մէջ կը քնանայ, կը հանգստանայ ու վստահ կ'ըլլայ, որ Աստուած ամէն բան կը կարգաւորէ իրեն համար:

• Մի՛ յուսահատիր, ինչքան ալ սատանային պատերազմները զօրաւոր ըլլան: Դուն քեզի ըսէ, ասոնք պարզապէս պատերազմներ են, իսկ ես Աստուծոյ մէջ պիտի հաստատուիմ:

• Ձեր կեանքի խաղաղութիւնը չի՛ կայանար արտաքին գործօններու վրայ, այլ՝ կը կայանայ հաւատքին եւ սիրտի էութեան վրայ, իսկ Աստուծոմով զօրաւոր սիրտը անյաղթահարելի պարիսպ մըն է:

• Աստուած կարող է անկարելին ընել կեանքիդ մէջ, նոյնիսկ եթէ ամէն ինչ իրար անցած ըլլայ վերջնականապէս: Վստահէ՛, որ Աստուած ամէն ինչի կարող է:



ՏԷՐ ՀՈՎՈՒՆԱԾԷ ԶԻԱ, ԵՒ ԻՆՁ ԻՆՁ ՈՉ ՊԱԿԱՍԵԱԾԷ:



**ԹԷՊԷՏ ԵՒ ԳԱԱԾԻՅ ԵԱ Ի ՄԷՉ
ԱՏՈՒԵՐԱԾ ՄԱՀՈՒ, ՈՉ ԵՐԿԵԱՅԻ
Ի ԶԱՐԷ ԶԻ ԴՈՒ ՏԷՐ ԸՆԴ ԻԱ ԵԱ:**

